

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<b>1. Վերահսկիչ պալատի հաշվետու տարվա գործունեության ընդհանուր նկարագիրը.....</b>	<b>3</b>
<b>2. Վերահսկիչ պալատի ուսումնասիրության արդյունքները .....</b>	<b>5</b>
2.1. Օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային միջոցների օգտագործման ընթացքի մասին _____	5
2.2. Պետական ծրագրերի կատարման նպատակով պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաև եկամուտների առանձին տեսակների գծով մուտքերի հավաքման մասին _____	11
2.2.1. ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե _____	11
2.2.2. ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն _____	14
2.2.3. Ջրային տնտեսության պետական կոմիտե _____	15
2.2.4. ՀՀ բնապահպանության նախարարություն _____	18
2.2.5. Ընդհանուր իրավասության դատարաններ _____	20
2.2.6. ՀՀ պետական տուրքերի և պետական բյուջեի հարկային եկամուտների հավաքման մասին _____	23
2.2.7. ՀՀ արտաքին գործերի նախարարություն, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնությունում ՀՀ դեսպանատուն _____	25
2.3. Պետական պատվերի և ծրագրերի կատարման նպատակով պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման մասին _____	27
2.3.1. ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ _____	27
2.3.2. «Հիվանդանոցային բուժօգնություն», «Առաջնային բուժօգնություն», «Հիգիենիկ - հակահամաճարակային ծառայություններ» առողջապահական ծրագրեր _____	29
2.3.3. «Աղքատության ընտանեկան նպաստների և միանվագ դրամական օգնություն» ծրագիր _____	31
2.3.4. «Միջին մասնագիտական կրթություն», «Հատուկ ընդհանուր կրթություն» և «Գիտություն» ծրագրեր _____	33
2.3.5. Կապիտալ շինարարություն և նորոգումներ _____	34
2.3.6. Սյունիքի մարզպետարան _____	36
2.4. Պետական գույքի մասնավորեցման մասին _____	38
2.4.1. Պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թթ. ծրագրի կատարման մասին ՀՀ Կառավարության 2004 թ. տարեկան հաշվետվության վերաբերյալ _____	38
2.4.2. Գիտատարտադրական, գիտահետազոտական եւ նախագծային աշխատանքներով զբաղվող պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների մասնավորեցման գործընթացի մասին _____	40
2.4.3 Պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների սնանկացման, լուծարման եւ գույքի օտարման արդյունքում պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կատարման մասին _____	42
2.4.4 Անտառային, ջրային հողերում հողահատկացման, անշարժ գույքի օգտագործման մասին _____	43
2.5. Համայնքներին պետական բյուջեից հատկացումների օրենսդրությամբ համապատասխանության և բյուջետային միջոցների օգտագործման մասին _____	46
2.5.1. Համայնքներին հատկացված միջոցների համապատասխանությունը ՀՀ օրենքներին _____	46
2.5.2 Համայնքների բյուջետային միջոցների օգտագործման վերահսկողության մասին _____	49
<b>3. Առաջարկություններ օրենսդրական բարեփոխումների վերաբերյալ.....</b>	<b>54</b>
<b>4. Միջազգային կապերը.....</b>	<b>55</b>
<b>5. Վերահսկիչ պալատի գործունեության ապահովումը.....</b>	<b>57</b>
5.1. Վերահսկիչ պալատի մեթոդաբանական ապահովումը _____	57
5.2. Վերահսկիչ պալատի տեղեկատվական ապահովումը _____	57
5.3. Վերահսկիչ պալատի կադրային ապահովումը _____	57
5.4. Վերահսկիչ պալատի ֆինանսական ապահովումը _____	58



## 1. Վերահսկիչ պալատի հաշվետու տարվա գործունեության ընդհանուր նկարագիրը

*Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի նկատմամբ: Ազգային ժողովը վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ քննարկում և հաստատում է պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը*

### **ՀՀ Սահմանադրություն**

*(փոփոխություններով)*

*77-րդ հոդված*

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի (*այսուհետ՝ Վերահսկիչ պալատ*) գործունեությունն իրականացվել է՝ **Հայաստանի Հանրապետության Սահմանադրության**, **«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ»**, **«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքներին, Վերահսկիչ պալատի 2005 թվականի գործունեության ծրագրին (*այսուհետ՝ Ծրագիր*) համապատասխան:

Ուսումնասիրություն իրականացնելու ընթացքում Վերահսկիչ պալատն առաջնորդվել է **Գերագույն վերահսկիչ ատյանների միջազգային կազմակերպության (ԳՎԱՄԿ/INTOSAI)** վերահսկողության սկզբունքներով:

Վերահսկողության արդյունքներն ամփոփվել են Վերահսկիչ պալատի խորհրդի կողմից հաստատված 39 հաշվետվություններում և տեղեկանքներում:

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի (*այսուհետ՝ Օրենք*) համաձայն Ազգային ժողով է ներկայացվել երեք եզրակացություն՝

- «Հայաստանի Հանրապետության 2004 թվականի պետական բյուջեի կատարման մասին» ՀՀ Կառավարության հաշվետվության,
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2004 թվականի տարեկան հաշվետվության,
- Պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թվականների ծրագրի կատարման մասին ՀՀ Կառավարության 2004 թվականի տարեկան հաշվետվության վերաբերյալ:

*Վերահսկիչ պալատի գործունեության արդյունքներն ամփոփվում են տարեկան հաշվետվության մեջ*

### **Օրենքի հոդված 15**

ՀՀ Ազգային ժողով են ներկայացվել հետևյալ կիսամյակային տեղեկանքները՝

- Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 2005 թվականի առաջին կիսամյակի կատարման,
- 2005 թվականի առաջին կիսամյակում պետական գույքի մասնավորեցման ծրագրի կատարման ,
- Օտարերկրյա պետություններից և միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման վերաբերյալ:

*Վերահսկողության կազմակերպումը հասարակության ֆինանսական միջոցների կառավարման պարտադիր տարրն է, քանի որ դրանից բխում է պատասխանատվությունը հասարակության հանդեպ*

**Վերահսկողության ղեկավար սկզբունքների Լիմայի հռչակագիր (Ընդունվել է 1977թ. INTOSAI IX համագումարում), (այսուհետ՝ Լիմայի Հռչակագիր) հոդված 1**

**Մկգաբունքները**

*Վերահսկիչ պալատի գործունեության սկզբունքներն են՝ անկախությունը, կոլեգիալությունը և հրապարակայնությունը*

**Օրենքի հոդված 4**

Ծրագրի 5, 10, 11 և 12-րդ կետերի պահանջների համաձայն՝ 2005 թվականի ընթացքում ՀՀ Ազգային ժողով են ներկայացվել հույժ գաղտնի տեղեկատվություն պարունակող հետևյալ հաշվետվությունները՝

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչությանը 2003 և 2004 թվականներին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման մասին,
- Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը 2004 թվականի պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման մասին:

**Վերահսկիչ պալատի գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտի մասին**

*«Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատը անկախ մարմին է, որը վերահսկողություն է իրականացնում բյուջետային միջոցների և պետության ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ: Վերահսկիչ պալատի գործունեության ծրագիրը հաստատում է Ազգային ժողովը: Վերահսկիչ պալատը տարեկան ոչ պակաս, քան մեկ անգամ Ազգային ժողով է ներկայացնում վերահսկիչ պալատի վերահսկողական աշխատանքների հաշվետվությունը: Վերահսկիչ պալատի գործունեության կարգը և իրավասությունը սահմանվում են օրենքով: Վերահսկիչ պալատի նախագահը նշանակվում է Հանրապետության Նախագահի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով: Վերահսկիչ պալատի նախագահ կարող է նշանակվել պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող անձը: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել վերահսկիչ պալատի նախագահ»:*

**ՀՀ Մահմանադրություն (փոփոխություններով)**

**83.4-րդ հոդված**

Հայաստանի Հանրապետության նախագահի կարգավորությամբ ստեղծվել է հանձնաժողով՝ «Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի կազման ուղղությամբ:


## 2. Վերահսկիչ պալատի ուսումնասիրության արդյունքները

### 2.1. Օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային միջոցների օգտագործման ընթացքի մասին

ՀՀ 2005 թվականի պետական բյուջեով<sup>1</sup> 25 վարկային ծրագրերի իրականացման համար օտարերկրյա պետություններից և միջազգային ֆինանսական կազմակերպություններից նախատեսվել է ներգրավել 46,744.2 հազ. ԱՄՆ դոլարի վարկային միջոցներ:

Ներգրավված վարկային միջոցների կառուցվածքն ըստ վարկատուների հետևյալն է՝

Գծապատկեր 1



25 վարկային ծրագրերից 16-ը՝ կամ 64%-ը թերակատարվել են, իսկ երկու ծրագրերի գծով նախատեսված 1,716.6 հազ. ԱՄՆ դոլարի դիմաց տարվա ընթացքում ընդհանրապես աշխատանքներ չեն կատարվել:

10 ծրագրերով նախատեսված աշխատանքների կատարողականը կազմել է 50%-ից պակաս (Աղյուսակ 1):

<sup>1</sup> Ներառյալ ՀՀ Կառավարության 976-Ն և 1700-Ն որոշումներով կատարված փոփոխությունները:

Վարկային ծրագրերի 2005 թվականի կատարողականը

հազ. ԱՄՆ դոլար


Ծրագրի անվանումը		ՀՀ 2005թ. պետական բյուջեով նախատեսված գումարը	Կատարված աշխատանքները <sup>2</sup>	Կատարված աշխատանքները նախատեսվածի նկատմամբ	Փաստացի վճարումները <sup>2</sup>	Փաստացի վճարումները աշխատանքների նկատմամբ
1		2	3	4=3/2	5	6=5/3
1	Լոռու մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագիր (Գ-ԶՎԲ)	814.3	0.0	0.0%	0.0	-
2	Շիրակի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագիր (Գ-ԶՎԲ)	902.3	0.0	0.0%	0.0	-
3	Էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման ծրագիր (Գ-ԶՎԲ)	2,562.2	335.8	13.1%	2,250.7	670.3%
4	Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագիր (ՄԶԸ)	614.0	108.4	17.7%	108.4	100.0%
5	Էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման ծրագիր (ՄԶԸ)	2,320.1	543.0	23.4%	2,622.4	482.9%
6	Պատվարների անվտանգության ծրագիր (ՄԶԸ)	1,807.8	583.6	32.3%	594.9	101.9%
7	Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագիր (Գ-ԶՄՀ)	629.0	216.6	34.4%	355.8	164.3%
8	Պետական հատվածի բարեփոխումների ծրագիր (ՄԶԸ)	479.0	167.9	35.1%	183.6	109.4%
9	Էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման ծրագիր (ՄՀՃԲ)	250.1	93.3	37.3%	52.0	55.7%
10	Ջերմամատակարարման և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին աջակցության ծրագիր (ՄԶԸ)	1,138.2	541.5	47.6%	370.8	68.5%
11	Պատվարների անվտանգության երկրորդ ծրագիր (ՄԶԸ)	1,395.8	708.0	50.7%	702.7	99.3%
12	Կրթության որակի և համապատասխանության ծրագիր (ՄԶԸ)	4,071.2	2,071.4	50.9%	2,066.0	99.7%
13	Ձեռնարկությունների ինկուբատոր ծրագիր (ՄԶԸ)	1,922.4	1,207.5	62.8%	1,217.0	100.8%
14	Առողջապահական համակարգի արդիականացման ծրագիր (ՄԶԸ)	1,080.8	759.3	70.3%	1,107.0	145.8%
15	Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր (ՄԶԸ)	5,323.6	4,041.8	75.9%	4,310.3	106.6%
16	Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագիր (ՄԶԸ)	1,462.0	1,174.7	80.3%	1,212.0	103.2%
17	Ոռոգման համակարգի զարգացման ծրագիր (ՄԶԸ)	5,886.7	5,828.1	99.0%	4,772.2	81.9%
18	Դատախարակական բարեփոխումների ծրագիր (ՄԶԸ)	3,710.1	3,833.7	103.3%	3,816.3	99.5%
19	Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ ծրագիր (ՄԶԸ)	3,866.3	4,743.9	122.7%	4,495.6	94.8%
20	Տրանսպորտի ծրագիր (ՄԶԸ)	21.6	27.0	125.0%	769.4	2849.6%
21	Օտարերկրյա ներդրումների և արտահանման խթանման ծրագիր (ՄԶԸ)	500.9	644.0	128.6%	644.0	100.0%
22	Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի նախապատրաստական կանխավճարի ծրագիր (ՄԶԸ)	664.7	884.9	133.1%	841.6	95.1%
23	Համայնքային զարգացման ծրագիր (ՄԶԸ)	1,904.2	3,254.2	170.9%	3,191.9	98.1%
24	Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագիր (ՄԶԸ)	400.0	730.6	182.6%	781.5	107.0%
25	Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և կոյուղու համակարգերի վերականգնման ծրագիր (Գ-ԶՎԲ)	3,017.0	6,838.4	226.7%	7,163.2	104.7%
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>46,744.2</b>	<b>39,337.6</b>	<b>84.2%</b>	<b>43,629.3</b>	<b>110.9%</b>

2 ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 26.01.06թ. թիվ 4/2-19-655 գրություն:

Բոլոր վարկերի հանրագումարային կատարողականի 84.2 տոկոսը պայմանավորված է որոշ ծրագրերի գերակատարումով

Մի շարք վարկային ծրագրերի իրականացման տեմպերը դեռևս անբավարար է:

Գծապատկեր 2



2005 թվականի ընթացքում **Վերահսկիչ պալատի կողմից վերահսկողություն է իրականացվել թվով 6 վարկային ծրագրերի նկատմամբ:**

1. Վերահսկողության արդյունքում գրեթե բոլոր ծրագրերով արձանագրվել է իրականացման ցածր տեմպեր: Այսպես՝
  - **«Ձեռնարկությունների ինկուբատոր»** ծրագրի թերակատարում է արձանագրվել բոլոր տարիներին, իսկ ծրագրի սկզբից մինչև 2005 թվականի ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում կատարվել են ամբողջ ծրագրով նախատեսված աշխատանքների ընդամենը 30.2%-ը այն դեպքում, երբ վարկային համաձայնագրով նախատեսված ծրագրի ավարտին մնացել էր ընդամենը 3 ամիս:
  - **«Բնական պաշարների կառավարում և չքավորության նվազեցում»** ծրագրի կատարողականը 2003 թվականին կազմել է ընդամենը 28.1%, իսկ 2004 թվականին՝ 42.8%:
  - **«Կրթության որակի և համապատասխանության»** ծրագիրը թերակատարվել է բոլոր տարիներին: 2003 թվականին կատարողականը կազմել է 35.5%, 2004 թվականին՝ 46.3%, 2005 թ. I կիսամյակում՝ 91%:

- **«Օտարերկրյա ներդրումների և արտահանման խթանում»** ծրագրի ավարտին 01.01.2005 թվականի դրությամբ մնացել էր մեկ տարի ժամկետ, սակայն աշխատանքները կատարվել էին ընդամենը 48.8%-ով:
- **«Համայնքային ջրամատակարարում և ջրահեռացում»** ծրագրի տեմպերը նույնպես բարելավման կարիք ունի: 2004 թվականին ծրագիրն իրականացվել էր ընդամենը 17.7%-ով, իսկ 2005 թվականի 9 ամսվա ընթացքում՝ 47.0%-ով:

**2. Արձանագրվել են ծրագրերն իրականացնող մի շարք գրասենյակների կողմից ՀՀ Կառավարություն**

Ծրագրերն իրականացնող մի շարք գրասենյակներ ՀՀ Կառավարություն չեն ներկայացրել հաշվետվություններ, իսկ որոշ հաշվետվություններ ներկայացվել են ՀՀ Կառավարության սահմանած ձևերի խախտումներով, ինչպես նաև արձանագրվել են տվյալների անճշտության փաստեր

ներկայացվող հաշվետվությունների չներկայացման, կամ դրանցում արտացոլված տվյալների անճշտության փաստեր:

Որոշ դեպքերում էլ հաշվետվությունները ներկայացվել են ՀՀ Կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված ձևերի խախտումներով:

**3. Խախտումներ են հայտնաբերվել տարեկան բյուջեների պլանավորման գործընթացում: Այսպես՝**

- ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից, «Համայնքային ջրամատակարարում և ջրահեռացում» ծրագրի 2004 և 2005 թվականներին բյուջետային ֆինանսավորման հայտերը կրճատվել են առանց հայտատուի հետ համաձայնեցնելու՝ խախտելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջները:
- ՀՀ 2004 և 2005 թվականների պետական բյուջեներով ծրագրի իրականացման համար նախատեսված գումարներում չեն պահպանվել վարկային համաձայնագրով սահմանված ֆինանսավորման (վարկային և բյուջետային միջոցների հաշվին) համամասնությունները:

**4. Արձանագրվել են ծրագրին հատուկ, իրականացման ընթացքում տեղ գտած տարբեր թերացումներ: Այսպես՝**

- **«Համայնքային ջրամատակարարում և ջրահեռացում» ծրագիր**  
Նախքան ծրագրով նախատեսված «Կրճատման ծրագիրը» կառավարման խորհրդի կողմից հաստատվելը, 2005 թվականի մարտ ամսվա ընթացքում կրճատվել են «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի 2417 աշխատակիցներից 610-ը: Կառավարման խորհրդի կողմից նշված ծրագիրը հաստատվել է միայն իրականացված կրճատումից շուրջ 4 ամիս անց:

- **«Բնական պաշարների կառավարում և չքավորության նվազեցում» ծրագիր**  
Ծրագրի նախապատրաստական փուլում մշակված «Ենթադրամաշնորհների ուղեցույցը» թերի էր կազմվել՝ չէր պարունակում ենթադրամաշնորհների տրամադրման հստակ կարգը և պահանջվող փաստաթղթերի ցանկը, որի հետևանքով 2005 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ծրագրի «Ենթադրամաշնորհներ» կատեգորիայով աշխատանքներ չեն կատարվել:



«Սևան», «Գիլիջան» ազգային պարկերի, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և ՀՀ բնապահպանական պետական տեսչության համար տրանսպորտային միջոցների ձեռքբերումը տարվա ընթացքում չի իրականացվել՝

### Առաջարկություններ

#### 1. ՀՀ Կառավարությանը՝

ձեռնարկել միջոցառումներ՝ «Կրթության որակի և համապատասխանության» ծրագրի օպտիմալացման արդյունքում կրճատված ուսուցիչներին նախատեսված օժանդակության գործընթացում տեղ գտած թերությունների վերացման և բարելավման ուղղությամբ

#### 2. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը՝

պահպանել վարկային համաձայնագրերով սահմանված ֆինանսավորման համամասնությունները

#### 3. Ծրագրերի կառավարման խորհուրդներին և ծրագրերի իրականացման գրասենյակներին՝

ձեռնարկել միջոցառումներ՝ ծրագրերի իրականացման տեմպերն էլ ավելի բարելավելու ուղղությամբ

#### 4. «Ձեռնարկությունների ինկուբատոր» ծրագրի իրականացման գրասենյակին՝

ուշադրություն դարձնել տարեկան բյուջեների պլանավորման գործընթացին, բացառել անիրատեսական պլանավորումը, ժամանակին իրականացնել պլանի ճշտումները

#### 5. «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամին՝

բարձրացնել ուսուցման և վերապատրաստման աշխատանքների արդյունավետությունը, կատարել մասնակիցների առավել արդյունավետ ընտրություն

Համաշխարհային բանկի և ծրագրի շահառուների հետ կարիքների գնահատման և գնման ենթակա ապրանքների վերջնական ցանկի հաստատման գործընթացի ձգձգման պատճառով:

➤ **«Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և կոյուղու համակարգերի վերականգնում» ծրագիր**

Ծրագիրն իրականացնող «Նոր Ակունք» ՓԲԸ-ի կողմից ջրամատակարարումը (ամառային ժամային գրաֆիկով) իրականացվում է մեծամասամբ 24 ժամ տևողությամբ, սակայն որոշ տարածքներում, արձանագրվել է 5-ժամյա ջրամատակարարում:

2005 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել են ջրագծերի միջին ամսական 103 վթար՝ 2004 թվականի նույն ժամանակաշրջանի 82-ի դիմաց: Վթարների հիմնական մասը արձանագրվել է այն հատվածներում, որտեղ դեռևս չեն իրականացվել վերականգնողական աշխատանքներ:

➤ **«Կրթության որակի և համապատասխանության» ծրագիր**

2004 թվականին համակարգչային սարքավորումների գնման միջազգային մրցույթը չկայանալու պատճառով, 200 դպրոցներում դպրոցական համակարգչային ուսումնական կենտրոնների ստեղծման գործընթացը չի կայացել: Հետագայում կայացել են ապակենտրոնացված մրցույթներ, և դպրոցներին մատակարարումը սկսվել է 2005 թվականի ապրիլ ամսից: Մի շարք դպրոցներում բացակայում է համակարգչային դասավանդման վերաբերյալ գրականությունը, տեղեկատվական նյութերը և համակարգչային կապը:

«Թեստերի մշակման» և «Ծրագրերի մշակման» աշխատանքային խմբերի վերապատրաստում և օժանդակություն խորհրդատվական ծառայությունների մատուցման մրցույթների արդյունքում ձևավորված գները գերազանցում են նախնական գնահատման արժեքները՝ համապատասխանաբար՝ 157.4 հազ. ԱՄՆ դոլարով և 31.2 հազ. ԱՄՆ դոլարով:

Գնահատման և թեստավորման կենտրոնի շենքի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և մշակման աշխատանքները հետաձգվել են՝ տարածքի հողահատկացման և

կադաստրային փաստաթղթերի բացակայության պատճառով, որի հետևանքով 01.07.2005թ. դրությամբ չեն կատարվել նշված շենքի վերանորոգման աշխատանքները:

Օպտիմալացման արդյունքում կրճատված ուսուցիչներին փոխհատուցման միանվագ նպաստները տրամադրելիս թույլ է տրվել ավելի վճարում՝ 1,250.351 դրամի չափով, որը վերականգնվել է:

Դպրոցական աշխատակազմի օպտիմալացման և սոցիալական աջակցության ենթածրագրի շրջանակներում այլ աշխատավայր տեղափոխման համար փոխհատուցման միանվագ նպաստների տրամադրման ծրագրում ընդգրկված 28 կրճատված ուսուցիչներին 11.05.05թ. դրությամբ վճարումներ չեն կատարվել:

Զբաղվածության գործակալության ներկայացրած ցուցակներում ընդգրկված 617 ուսուցիչներից միայն 91-ի (14.7%) անունները և միջին աշխատավարձի վերաբերյալ տվյալներն են համապատասխանում կրթության մարզային վարչությունների ներկայացրած տվյալներին:

➤ **«Ձեռնարկությունների ինկուբատոր» ծրագիր**

Ծրագրի «Կառավարվող աշխատանքային տարածք» բաղադրիչով նախատեսվել էր 2003 թվականի մարտին ունենալ համապատասխան աշխատանքային տարածք, որը վարձակալությամբ կտրամադրվի տեղեկատվական տեխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՏ) ոլորտի ընկերություններին: Տարածքը ապահովված կլինի ինտերնետային ծառայությունների օպտիկական մալուխային կապի լոկալ ցանցով, ծրագրերով, համակարգչային տեխնիկայով և ուսումնական ձեռնարկներով հագեցած ուսումնական կենտրոնով, գրասենյակային կահույքով:

Սակայն միայն 2003 թվականի մարտի 25-ին է հայ-սլավոնական համալսարանի հետ ստորագրվել Վարձակալության պայմանագիր (գումարը՝ տարեկան 7.7 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, ժամկետը՝ 20 տարի, տարածքը՝ 1900 քմ), իսկ կապալի մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կապալառուի հետ պայմանագիրը կնքվել է 2004 թվականի հուլիսի 16-ին: Ծինարարական աշխատանքների ընթացքում Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի (Հիմնադրամ) կողմից կապալառուին առաջադրվել են լրացուցիչ աշխատանքներ և նախատեսված աշխատանքների փոփոխություններ: Արդյունքում, հունվարի 31-ին կողմերի միջև կնքված պայմանագրի փոփոխությամբ աշխատանքների ավարտման ժամկետը երկարաձգվել է մինչև 2005 թվականի մարտի 15-ը, իսկ մարտի 15-ին կնքված փոփոխությամբ պայմանագրի արժեքը ավելացել է շուրջ 11,140.0 ԱՄՆ դոլարով:

Ծինարարական աշխատանքների պայմանագրի ժամկետի երկարաձգմանը զուգահեռ՝ երկարաձգվել են նաև տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության և Ծրագրի ղեկավարի հետ կնքված պայմանագրերի գործողության ժամկետները, որի արդյունքում աճել են նաև պայմանագրային արժեքները՝ տեխնիկական հսկողության մասով՝ 2.2 հազ. ԱՄՆ դոլարով, իսկ Ծրագրի ղեկավարի մասով՝ 0.8 հազ. ԱՄՆ դոլարով:

Ծինարարության ավարտական ակտը Ծրագրի ղեկավարի կողմից ստորագրվել է 2005 թվականի մարտի 21-ին, որը Պատվիրատուի կողմից հաստատվել է 2005 թվականի ապրիլի 15-ին:

Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնելու համար 2002 թվականի ապրիլ ամսից վարձակալել է ավելի քան 150 քմ տարածք «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամից, որի համար մինչև 2005 թվականի ապրիլի 1-ը վճարել է 97.9 հազ. ԱՄՆ դոլար վարձավճար: Հետևաբար, եթե Ծրագիրն իրականացվեր ըստ ժամանակացույցի և Հիմնադրամի կառավարվող աշխատանքային տարածքը

պատրաստ լինել 2003 թվականի մարտին, ապա Հիմնադրամի կողմից չէր վճարվի 67.3 հազ. ԱՄՆ դոլար վարձավճար՝ վարկային միջոցների հաշվին:

Ծրագրի կարևորագույն՝ «Բիզնես ծառայությունների կենտրոն» բաղադրիչով նախատեսված տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հայկական ընկերությունների զարգացման, վերապատրաստման, բիզնես կապերի ձևավորման աշխատանքները 01.04.2005 թվականի դրությամբ կատարվել են ընդամենը 16.7%-ով:

Արձանագրվել է «Ձեռնարկությունների ինկուբատոր» վարկային ծրագրի շրջանակներում վարկային միջոցների ոչ արդյունավետ օգտագործման փաստ, այսպես՝ շինարարական աշխատանքների իրականացման ժամկետների երկարաձրգման հետևանքով ավելի է վճարվել 70.3 հազ. ԱՄՆ դոլարի վարկային միջոցներ:

Ծրագրի սկզբից մինչև 01.04.2005 թվականը արտասահմանում փորձի փոխանակման մասնակցել են 9 ընկերությունների ղեկավար անձնակազմի ներկայացուցիչներ, որոնցից 3-ը առաջատար արտասահմանյան ընկերությունների ներդրմամբ կազմակերպությունների ներկայացուցիչներ են (ամերիկյան Leda Design, շվեյցարական Xalt և Միացյալ Արաբական Էմիրությունների SystroTech), մինչդեռ

Հայաստանում գործում են զուտ հայաստանյան տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ավելի քան 100 ընկերություններ, որոնց փորձի փոխանակումը առաջատար արտասահմանյան ընկերություններում ավելի արդիական է:

Ծրագրի «Հմտությունների զարգացման հնարավորություններ» բաղադրիչով նախատեսվել է օժանդակել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ներկա և ապագա մասնագետներին, այդ թվում՝ ուսումնական հաստատությունների ուսանողներին, աշակերտներին և երիտասարդ մասնագետներին՝ գիտելիքների խորացման, վերապատրաստման, աշխատատեղերի ստեղծման և այլ հարցերում: 01.04.2005 թվականի դրությամբ բաղադրիչն իրականացվել էր ընդամենը 22.1%-ով: Դրամաշնորհ տրամադրվել է ընդամենը մեկ, այն էլ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում 10 տարուց ավելի փորձ ունեցող ընկերությանը: Ծրագրի «Ուսումնասիրություններ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում» բաղադրիչով իրականացվել էր ընդամենը մեկ մրցույթ:

**2.2. Պետական ծրագրերի կատարման նպատակով պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաև եկամուտների առանձին տեսակների գծով մուտքերի հավաքման մասին**

**2.2.1. ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**

Ուսումնասիրվել է ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին (այսուհետ՝ Կոմիտե) պետական ծրագրերի կատարման նպատակով 2004 թվականին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաև եկամուտների առանձին տեսակների գծով մուտքերի հավաքագրման և պետական բյուջե վճարման համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը: Կոմիտեի կողմից իրականացվել է 21 ծրագրային աշխատանք, որի համար պետական բյուջեից հատկացվել է 1,536,652.8 հազ. դրամ:

**Առաջարկություններ**

**1. ՀՀ Ազգային ժողովին և ՀՀ Կառավարությանը**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կադաստրային քարտեզագրման աշխատանքներում իրենց կիրառությունն են գտնում ժամանակակից թվային տեխնոլոգիաներ ունեցող գործիքները, իսկ նոր շահագործվող տեխնիկային տիրապետող և վերապատրաստում ստացած մասնագետների թիվը մեծ չէ, ուստի խախտումները և կրկնակի չափագրումները բացառելու համար նպատակահարմար է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետում կատարել փոփոխություններ՝ ըստ ճյուղային նշանակության աշխատանքների, մասնավորապես՝

- տեղագրական,
- կադաստրային քարտեզագրում,
- գեոդեզիական,
- ինժեներագեոդեզիական:

**2. ՀՀ Կառավարությանը՝**

Հետագայում աշխատանքների վերականգնման համար պետական բյուջեից հատկացվելիք մեծ ծախսերը բացառելու նպատակով առաջարկում ենք կանոնակարգել սեփականության իրավունքով համայնքներին փոխանցվող հողերի համար կազմված քարտեզագրական նյութերի՝ հետագա արդիական վիճակում պահելու և սկզբնական տվյալների թարմացման գործընթացի կազմակերպումը և իրականացումը:

1. «Կադաստրային քարտեզագրում՝ առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացում» ծրագրով 2004 թվականին պետական բյուջեով նախատեսվել և հատկացվել է 240,000.0 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 231,748.4 հազ. դրամ, այսինքն՝ ծրագրի կատարողականը կազմել է՝ 96.6%: Չորրորդ փուլի աշխատանքների մի մասը տեղափոխվել է հաջորդ տարի:

2004 թվականի ընթացքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքներ են իրականացվել հանրապետության 233 համայնքներում: Արձանագրվել է, որ իրավունքների պետական գրանցման աշխատանքների ընթացքում ամբողջությամբ չի կարգավորվել գրանցմանը խոչընդոտող ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների մեծ քանակը, ինքնակամ գբադեցված հողամասերի առկայությունը, համասեփականատերերի վերաբերյալ տեղե-

կանքների բացակայությունը, հողամասերի սեփականատերերի անհայտ լինելը, չբացված ժառանգությունները, շներկայացված օտարման պայմանագրերը և այլ հարցեր:

Ուսումնասիրություններից պարզվել է, որ իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքներին տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությունը կրել է ձևական բնույթ: Տեղական իշխանությունները դրան անմիջականորեն մասնակցելու և աջակցելու փոխարեն, ձգձգում կամ խոչընդոտում են գույքի նկատմամբ իրավունքները հաստատող փաստաթղթերի տրամադրումը, որի հետևանքով իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքները մի շարք համայնքներում կարելի է համարել դադարեցված (Արտաշատ, Աշտարակ, Գավառ, Արաքս, Ուջան, Զուլաբար, Այգեհովիտ և այլն): Աշխատանքների ձգձգումը, մեր կարծիքով, հանգեցնելու է պետության համար լրացուցիչ ծախսերի և խոչընդոտ է հանդիսանալու կարևոր՝ իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքներն արդյունավետ ավարտելուն:

2. Պետական մասշտաբի շարքի բազային քարտեզների ստեղծման, օդատիեզերալուսանկարահանման աշխատանքների իրականացման և ֆոտոգրամամետրիական մշակման աշխատանքների (քարտեզագրում) ծրագրով նախատեսված աշխատանքներն արդյունավետ կատարելու և լիարժեք արդյունք ստանալու համար առկա են մի շարք խոչընդոտներ:

Դրանց թվում է, ակնանապատված և սահմանամերձ տարածքները, որոնք ժամանակին սեփականաշնորհվել են, սակայն դրանք այսօր չեն մշակվում և փաստագրել հնարավոր չէ: Սահմանամերձ գոտում աշխատանքներ կատարելու թույլտվություն ստանալու գործընթացը տևում է 2-3 ամիս, որը բերում է պայմանագրային ժամկետների ուշացման: Այդ կապակցությամբ, տեղագրական քարտեզներ ստեղծելու ժամանակ սեփական օբյեկտներ մուտք գործելու և չափագրելու համար արգելք հանդիսացող երևույթները բացառելու նպատակով անհրաժեշտ է կանոնակարգել գործառույթները:

3. Թեմատիկ քարտեզագրման, այդ թվում՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ատլասի ստեղծման աշխատանքներ» ծրագրի՝ ՀՀ Կառավարության 26.12.02 թվականի թիվ 2163-Ն որոշմամբ հաստատված ժամանակացույցով, 2004 թվականին նախատեսված աշխատանքները կատարվել են 83.3%-ով:

Ընդհանուր առմամբ, 2003-2004 թվականների կտրվածքով հատկացված գումարի շրջանակներում կատարվել է ծրագրով նախատեսված աշխատանքների 85.4%-ը:

4. «ՀՀ համայնքների վարչական սահմանների ճշգրտման և նկարագրման աշխատանքներ» ծրագրի իրականացման գործում մտահոգության առարկա է կադաստրային աշխատանքների արդյունքում ստեղծված նյութերը համայնքերին փոխանցելու գործընթացը:

Համայնքներին հանձնվող նյութերի՝ հետագայում արդիական վիճակում պահելը և սկզբնական տվյալների հետագա թարմացումը խիստ անորոշ է: Այսօր համայնքները չունեն ոչ անհրաժեշտ մասնագիտական որակավորում ունեցող մասնագետներ, ոչ էլ ժամանակակից գեոդեզիական գործիքներ՝ հողերի կառավարման ոլորտում առկա խնդիրները լուծելու համար:

5. ՀՀ Կառավարության 19.09.02 թվականի թիվ 1530-Ն՝ «Հայաստանի Հանրապետության գեոդեզիայի ոլորտի 2002-2006 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» որոշմամբ 2004 թվականին նախատեսվել են ՀՀ պետական բարձունքային 1-ին և 2-րդ դասերի ցանցերի վերակառուցման, նիվելիրացման և հավասարակշռման աշխատանքներ:

Այդ աշխատանքներից 1-ին դասի նախատեսված 1484.9 գծ/կմ-ից իրականացվել է 513.8 գծ/կմ, որից՝ 2004 թվականին՝ 373.8 գծ/կմ (ծրագրով նախատեսվել է 700 գծ/կմ), 2-րդ դասի նախատեսված 852.2 գծ/կմ-ից՝ 200 գծ/կմ (2004 թ.):

6. «Անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացված համակարգի ներդրում, զարգացում և տեղեկատվական բանկի սպասարկում» ծրագրով հատկացված միջոցների հաշվին մուտքագրվել է 234023 կադաստրային գործի տվյալներ (նախատեսված 333 000-ի փոխարեն) կամ 70.3%-ը, ավարտվել է 400 համայնքի կադաստրային քարտեզների նոր ծրագրային սպահովման համակարգում ծածկագրումը (նախատեսված 450 համայնք) կամ 88.9%-ը:

7. 2004 թվականի ընթացքում նախատեսված ծրագրերից՝ «Երկրատեղեկատվական համակարգի նախագծում, ներդրում և սպասարկում» ու «Շարժական գույքի գրավի, հիպոթեքի, ֆինանսական վարձակալության (լիզինգի) գրանցում» ծրագրերը չեն իրականացվել:

**2.2.2. ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն**

Վերահսկողություն է իրականացվել ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությանը պետական ծրագրերի կատարման նպատակով 2004 թվականին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, եկամուտների առանձին տեսակների գծով մուտքերի հավաքագրման, ինչպես նաև պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների կողմից շահութաբաժինների հաշվարկման և պետական բյուջե վճարման նկատմամբ:

Գլխավոր վարչությունը խախտել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջները և առանց ՀՀ Կառավարության համապատասխան որոշման և հաստատված նախահաշվի, համակարգի և այլ ընկերություններից ֆինանսական օգնություն է ստացել և ծախսել 107,560.4 հազ. դրամ:

Արձանագրվել է.

1. Բյուջետային տարում չօգտագործված միջոցները՝ 1,022.5 հազ. դրամ, տարեվերջին պետական բյուջեի փոխանցվել, որով խախտվել է ՀՀ Կառավարության 15.03.2004 թվականի թիվ 216-Ն որոշման 3.1 կետի պահանջները:
2. 2003-2004 թվականներին գլխավոր վարչության

արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման վերաբերյալ ՀՀ Կառավարությունը որոշում չի կայացրել, նախահաշիվ չի կազմվել և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համաձայնությանը չի ներկայացվել:

**Առաջարկություն**  
**ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությանը**  
ՀՀ պետական բյուջե վերականգնել պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների դիմաց անհիմն ավելի վճարված 1,245.4 հազ. դրամը

Միաժամանակ, գլխավոր վարչությունը, խախտելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ կետի և ՀՀ Կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 404 որոշմամբ<sup>1</sup> հաստատված կարգի պահանջները, «Արդշինինվեստբանկի «Զվարթնոց» մասնաճյուղում

բացված բանկային հաշվում մուտքագրել և ծախսել է համակարգի, ինչպես նաև այլ ընկերություններից ստացված ֆինանսական օգնության գումարները՝ 42,200.0 հազ. դրամ: Գլխավոր վարչությունը ոչ պետական աղբյուրներից տրամադրված անհատույց և չփոխհատուցվող արտաբյուջետային ֆինանսական միջոցներից ևս 3,332.0 հազ. դրամը մուտքագրել և ծախսել է դրամարկղից: Համակարգի ընկերությունների միջոցների հաշվին գլխավոր վարչության համար կատարվել է ևս 65,917.3 հազ. դրամի ծախս:

Այսպիսով, գլխավոր վարչությունը, օրենսդրության պահանջների խախտմամբ, առանց ՀՀ Կառավարության համապատասխան որոշման և հաստատված նախահաշվի, համակարգի, ինչպես նաև այլ ընկերություններից ֆինանսական օգնություն է ստացել և ծախսել 107,560.4 հազ. դրամ այն դեպքում, երբ ՀՀ Կառավարության կողմից գլխավոր վարչությանը գործառույթներն իրականացնելու համար հատկացվել էր 58,268.9 հազ. դրամ:

<sup>1</sup> ՀՀ բյուջետային հիմնարկների արտաբյուջետային միջոցների սպասարկման, հաշվառման և վերահսկողության կարգը հաստատելու մասին

### 2.2.3. Ջրային տնտեսության պետական կոմիտե

«ՀՀ բնակավայրերի բազմաբնակարան շենքերի ջրաչափերի ձեռքբերում և տեղադրում» ծրագրով նախատեսված աշխատանքները, որոնք միտված էին հաշվառման համակարգի բարելավմանը և ծախսերի կրճատմանը, չեն կատարվել: ՀՀ պետական բյուջեով ծրագրի կատարման համար հատկացված միջոցներից՝ 717,200.0 հազ. դրամ ՀՀ Կառավարության 26.08.04թ. թիվ 1155-Ն որոշմամբ ուղղվել է ոռոգման համակարգի սուբսիդավորմանը, իսկ ծրագրից ակնկալվող արդյունքը, որպես այդպիսին, չի ապահովվել:

կոյուղի» ՓԲ ընկերությունում:

#### 2. ԱԱՀ-ի սուբսիդավորման և փոխհատուցման մասին.

«Հայաստանի Հանրապետության 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 15-րդ կետին համապատասխան, ջրամատակարարող ընկերություններին ԱԱՀ-ի մատուցվող պետական

2004 թ. ընթացքում 35 ջրօգտագործող ընկերությունների իրացման շրջանառությունից հաշվարկված ԱԱՀ-ի գումարից, առանց հաշվանցման ենթակա գումարների նվազեցման, ավելի փոխհատուցում է տրվել 152,672.0 հազ. դրամ, իսկ 16 ընկերությունների մատուցվող սուբսիդիային ջրային ԱԱՀ-ի գծով կուտակվել է 1,567.0 հազ. դրամի հարկային պարտավորություն

ՀՀ ջրային տնտեսության պետական ծրագրերի կատարման նպատակով պետական բյուջեից 2005 թվականին հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաև եկամուտների առանձին տեսակների գծով մուտքերի հավաքման ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է.

1. 2004 թվականին ծրագրի իրականացման համար հատկացված միջոցների հաշվին կատարվել է միայն 26,500.0 հազ. դրամի նախագծման աշխատանքներ, որոնք մինչև օրս իրենց ձևակերպումը չեն ստացել «Հայջրմուղ-

բյուջե կատարվող վճարումների գծով ծախսերի մասնակի փոխհատուցման նպատակով հատկացվել է 800,000.0 հազ. դրամ սուբսիդիա: Հատկացված գումարների հաշվին փակվել են 51 ջրօգտագործող ընկերությունների պետբյուջեի նկատմամբ ունեցած ԱԱՀ-ի գծով պարտավորությունները՝ գումարով 496,487.1 հազ. դրամ:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2004 թվականի ընթացքում 51 ջրօգտագործող ընկերություններ, որոնք ստացել են ԱԱՀ-ի գծով ծախսերի փոխհատուցում, մատակարարված ոռոգման ջրի դիմաց կատարել են գանձում՝ 2,507.8 մլն դրամ: Ոռոգման ջրի դիմաց 51 ջրօգտագործող ընկերությունների կողմից ընդհանուր գանձված գումարից, «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 24<sup>1</sup> հոդվածի համաձայն, հաշվարկված ԱԱՀ-ի գումարը, առանց հաշվետու ժամանակաշրջանում սահմանված կարգով հաշվանցման ենթակա գումարների նվազեցման, կազմում է 418,062.0 հազ. դրամ, ջրտնտեսական կողմից ընկերություններին ԱԱՀ-ի փոխհատուցման նպատակով վճարվել է 496,487.1 հազ. դրամ կամ **78,425.0 հազ. դրամ ավելի:**

Ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից ջրօգտագործող ընկերությունների ընտրությունը՝ փոխհատուցում վճարելիս, կատարվել է ոչ համակողմանի վերլուծության արդյունքում, որը պատճառ է դարձել շատ ընկերությունների անունից պետբյուջե ավելի գումարների վճարմանը:

**Առաջարկություններ**

**ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեին՝**

**Միջոցներ ձեռնարկել.**

1. Համակարգի ընկերությունների կանոնադրական կապիտալում՝ օրենսդրությամբ սահմանված կարգի պահանջների խախտմամբ, պակաս հաշվարկված ներդրվող գույքի արժեքը՝ 2,208.8 մլն դրամ, վերաձևակերպելու ուղղությամբ:
2. Ջրօգտագործող ընկերությունների կողմից 2004 թ. ընթացքում մատակարարված ոռոգման ջրի դիմաց պակաս ձևակերպված վարձավճարների գծով դեբիտորական պարտքը, գումարով՝ 382.3 մլն դրամ, վերականգնելու ուղղությամբ:
3. 2004 թ. ընթացքում 35 ջրօգտագործող ընկերությունների ԱԱՀ-ի գծով փոխհատուցման նպատակով ավելի վճարված 152.6 մլն դրամ գումարը վերականգնելու ուղղությամբ:
4. Ելնելով սպասարկվող տարածքների մեծությունից, առանձնահատկություններից տնտեսապես չհիմնավորված ՋՕԸ-երը վերամիավորել՝ կատարվող ծախսերի արդյունավետությունը ապահովելու համար:

ԱԱՀ-ի գծով փոխանցված ավելի գումարները չեն արտացոլվել «Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից ներկայացված 01.01.05 թվականի դրությամբ «Ջրօգտագործող ընկերությունների ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ» տեղեկանքում:

Ջրօգտագործող ընկերությունների կողմից ներկայացված հաշվետվություններում չի ուսումնասիրվել և չի ճշտվել փաստացի պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարները, որը պատճառ է դարձել գերավճարների առաջացման: Պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործումն ակնկալվող արդյունավետություն չի ապահովել:

**3. «Ռոռզման համակարգի**

**սուբսիդավորում»** ծրագրով հաստատվել է 4,403.0 մլն դրամ, ճշտված բյուջեով սուբսիդիան կազմել է 5,154.9 մլն դրամ կամ նախատեսվածից ավելի է ֆինանսավորվել 751.9 մլն դրամ:

Ջրօգտագործող ընկերությունների 2004 թ. ֆինանսական կանխատեսումների նախահաշիվներով նախատեսվել է ծախս 8,459.2 մլն դրամ, իսկ մատակարարված ջրի դիմաց գանձում՝ 4,086.1 մլն դրամ (այդ թվում՝ ԱԱՀ) կամ 80%, ֆինանսական ճեղքվածք՝ 4,373.1 մլն դրամ, որի դիմաց վճարվել է 4,584.5 մլն դրամ սուբսիդիա, կամ 211.4 մլն դրամով ավելի նախատեսվածից: Ավելի է վճարվել Արտաշատ, Արարատ, Ագատ, Վեդի, Մասիս, Մխչյան, Կոտայք, Ջրվեժ-Չորաղբյուր, Հրազդան ջուր, Վարդենիս, Սև Ջուր, Ախթամար, Խնձորուտ, Գետիկ ջրօգտագործող ընկերություններին:

Մատակարարված ոռոգման ջրի վարձավճարների գծով պակաս է հաշվարկվել և ձևակերպվել 382.3 մլն դրամ վարձավճար, որը ենթակա է վերականգնման

2004 թվականի ընթացքում ընկերություններին հատկացվել է նաև ԱԱՀ-ի փոխհատուցման նպատակով 496.5 մլն դրամ: Ընդհանուր առմամբ, ընկերություններին հատկացվել է նախատեսված ճեղքվածքից 707.9 մլն դրամ ավելի գումար (211.4+496.5):

Ըստ ջրօգտագործող ընկերությունների ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ ներկայացրած տեղեկանքի՝ 01.01.05 թ. դրությամբ 2004 թ. մատակարարված ոռոգման ջրի վարձավճարների գծով իրացումից հասույթը կազմել է 4,459.2 մլն դրամ, գանձումը՝ 2,513.8 մլն դրամ, չգանձված գումարը՝ 1,945.4 հազ. դրամ, սակայն դեբիտորական պարտքը 2004 թ. մատակարարված ջրի վարձավճարների գծով՝ 1,563.1 մլն դրամ կամ պակաս է հաշվարկվել և ձևակերպվել 382.3 մլն դրամ վարձավճար, որը ենթակա է վերականգնման:



ՀՀ պետական բյուջեից տրվող տարեկան հատկացված սուբսիդիաներից հետո ընկերություններում կուտակվել են աշխատավարձի, սոցիալական ապահովագրության վճարների, էլեկտրաէներգիայի, հարկերի և այլ մատակարարների գծով պարտքեր: Դեռևս գոհացուցիչ չէ գանձումների մակարդակը: Չի ապահովվել ծրագրով սկսնակվող արդյունքները:

Ելնելով սպասարկվող տարածքների մեծությունից, առանձնահատկություններից տնտեսապես չհիմնավորված ՋՕԸ-երը անհրաժեշտ է վերամիավորել՝ կատարվող ծախսերի արդյունավետությունը ապահովելու համար:

2004 թ. ընթացքում պետական բյուջեից «Ձեռնարկություններին և կազմակերպություններին տրվող սուբսիդիաների» ֆինանսավորումը 2003 թ. նկատմամբ աճել է 16.4%-ով, այսինքն՝ աճել են սուբսիդիաները, այլ ոչ թե աստիճանաբար կրճատվել, ինչպես նախատեսվել է «Հայաստանի Հանրապետության 2005-2007 թվականների բյուջետային միջնաժամկետ ծախսերի ծրագրում»: Ջրօգտագործող ընկերություններին տրամադրված սուբսիդիան գերազանցել է ֆինանսական ճեղքվածքը:

Ծրագրի իրականացումից սկսնակվող արդյունքների՝ ջրաղբյուրներից վերցվող ջրաքանակի ծավալի կրճատման, ջրի խնայողական օգտագործման, վարձավճարների հավաքագրման ցուցանիշի էական բարելավման, առավելագույն եկամուտներով նվազագույն ծախսերի սկզբունքի կատարումը դեռևս բավարար չէ, և ծրագրից սպասվող արդյունքները չեն ապահովվել:

Աղյուսակ 2

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման 2000-2004 թվականների հիմնական ցուցանիշները

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	2000թ.	2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.
1	Ջրառ (մլն խ/մ)	149	160	144	169.7	184.2
2	Սպառողներին տրված ջրի քանակ (մլն խ/մ)	83	79	63	62.1	48.4
3	Կորուստ (%)	44.3	51.0	54.3	63.4	74.0
4	Հավաքում (%)	30.6	37.9	45.7	69.0	58.8

Աղյուսակ 3

Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲ ընկերության ջրամատակարարման 2000-2004 թվականների հիմնական ցուցանիշները

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	2000թ.	2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.
1	Ջրառ (մլն խ/մ)	431	407	394.8	403.2	367.4
2	Սպառողներին տրված ջրի քանակ (մլն խ/մ)	118.7	115	112.4	97.4	72.4
3	Կորուստ (%)	72.5	71.8	71.5	75.8	80.2
4	Հավաքում (%)	20.0	26.7	45.1	-	86.3

**«Ոռոգում-ջրառ» ՓԲ ընկերության 2002-2004 թթ. գնված ջրի քանակը, սպառողներին տրված ջրի քանակը  
և էլեկտրատեղակայի սպառումը ռոռզման ոլորտում**

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	2002թ.	2003թ.	2004թ.
1	Ջրառ (մլն խ/մ)	1200.2	1025.5	1294.6
2	Սպառողներին տրված ջրի քանակ (մլն խ/մ)	1075.8	970.6	997.9
3	Կորուստ (%)	10.4	5.4	22.9
4	Հավաքում (%)	64.3	58.9	76.6
5	Էլեկտրատեղակայի սպառում (մլն կվ/ժ)	142.3	90.6	126.8

**«Ոռոգում-ջրառ» ՓԲ ընկերության 2002-2004թվականների ռոռզման ոլորտի  
ֆինանսական հիմնական ցուցանիշները**

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	2002թ.	2003թ.	2004թ.
1	Մատակարարված ջրի արժեք (մլն դրամ)	906.6	757.5	2946.0
2	Հավաքված գումարներ (մլն դրամ)	583.3	446.1	2277.1
3	Ընթացիկ ծախսեր (մլն դրամ)	3758.4	2858.3	3549.5
4	Ինքնարժեք (ընթացիկ, դրամ/խմ)	3.49	2.94	3,56
5	Սակագին (դրամ, խմ)	0.843	0.78	2.95

4. Ջրային տնտեսության պետական կոմիտեն, որպես լիազոր մարմին, չի ապահովել դրա ենթակայության 50% և ավելի պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների տարեկան հաշվապահական հաշվեկշիռներում, որպես կրեդիտորական պարտքեր, պետբյուջեի նկատմամբ պետական շահութաբաժինների գծով պարտավորությունների արտացոլումը, խախտելով ՀՀ Կառավարության 05.12.01թ. թիվ 1194 որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետի պահանջները: Նախորդ տարիների գործունեության արդյունքում համակարգի ընկերությունների կողմից հաշվարկված 1,779.4 հազ. դրամ ապառք շահութաբաժինը մինչև օրս պետբյուջե չի վճարվել:

Ընկերությունների կողմից հաշվապահական հաշվառումը սահմանված կարգի խախտումներով վարելու, տարեկան եկամուտները պակաս ցույց տալու, զուտ շահույթները պակաս հաշվարկելու հետևանքով պետական բյուջե 1,779.4 հազ. դրամ ապառք շահութաբաժինը չի վճարվել

**2.2.4. ՀՀ բնապահպանության նախարարություն**

**1. Պետական ծրագրերի իրագործում**

2004 թվականի բյուջեով ՀՀ բնապահպանության նախարարությանը ծրագրերով նախատեսվել է հատկացնել 1,003,158.9 հազ. դրամ: Փաստացի ֆինանսավորումը կազմել է 1,022,739.5 հազ. դրամ: Ծրագրերը հիմնականում իրականացվել են նախարարության կողմից հիմնադրված ՓԲԸ-ի և պետական ոչ առևտրային կազմակերպությունների հետ կնքած պայմանագրերով՝ 475,379.0 հազ. դրամ ընդհանուր գումարով:

**ՀՀ բնապահպանության նախարարության կողմից համակարգի  
ՊՈԱԿ-ներին և ՓԲԸ-ներին 2004 թվականի ընթացքում բյուջետային առանձին ծրագրերով  
հատկացված միջոցների օգտագործման վերաբերյալ**

№	Անվանումներ	Նախատեսված է ֆինանսավորում և հաստատված է պայմանագրով	Բացվել է ֆինանսավորում
1	«Հայաստանի բնության քանդարան» ՊՈԱԿ	10169.4	10169.3
2	«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ	4000.0	4000.0
3	«Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ	80000.0	80000.0
4	«Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ	17168.0	17168.0
5	«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ	29731.2	29731.2
6	«Շիկահող» պետարգելոց» ՊՈԱԿ	7660.2	7660.2
7	«Անտառ գիտափորձարարական կենտրոն» ՊՈԱԿ	4600.0	4600.0
8	«Խոսրովի անտառ» պետարգելոց» ՊՈԱԿ	42120.0	42120.0
9	«Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ	4043.0	4043.0
10	«Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ	16289.5	16289.5
11	«Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետծառայություն» ՊՈԱԿ	244097.7	244097.7
	<b>Երկրաբանահետախուզական աշխատանքներ, այդ թվում՝</b>	<b>15500.0</b>	<b>15500.0</b>
12	«Ջրհան» ՊՓԲԸ	7000.0	7000.0
13	«Գեոկոմպլեքս» ՊՓԲԸ	4000.0	4000.0
14	«Ընդերքաբան» ՊՓԲԸ	4500.0	4500.0
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>475379.0</b>	<b>475378.9</b>

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ պետական ծրագրերի աշխատանքների գնման պայմանագրերի անբաժանելի մասը կազմող տեխնիկական բնութագրերը, նկարագրությունը, չափորոշիչները չեն համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Նորմատիվների բացակայության պատճառով, պայմանագրային գները ձևավորվել են ոչ թե գնահաշվարկների արդյունքում, այլ՝ պայմանավորվել են յուրաքանչյուր ծրագրի համար նախատեսված միջոցների չափով:

Նախարարության պահպանման ծախսերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ և 24-րդ հոդվածների պահանջների խախտում:

**2. Ընդերքշահագործողների կողմից ընդերքի շահագործում և եկամուտների առանձին տեսակների գծով մուտքերի հավաքում.**

Պարզվել է, որ 2004 թվականին առանց լեռնահատկացման ակտի (անօրինական) շահագործվել են 90 հանքավայր և տեղամաս:

2004թ. 36 ընդերքշահագործողների կողմից ներկայացված 5-ՕՀՊՀ (օգտակար հանածոների պաշարների հաշվեկշիռ) հաշվետվություններում մարված օգտակար հանածոների նշված ծավալը գերազանցել է 70-SU (տեխնիկարտադրական) եռամսյակային հաշվետվություններով ներկայացված ծավալները

135.0 հազ. խորանարդ մետրով, որի համար չի մուծվել շուրջ 5.0 մլն դրամ բնօգտագործման վճար: 2005 թվականի առաջին կիսամյակի համար 48.2 մլն դրամ բնօգտագործման վճար չի վճարել նաև «Արարատ ոսկու արդյունահանման ձեռնարկություն» ՍՊԸ-ն:

14 ընդերքօգտագործողներ 2004 թվականի համար շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին

**Առաջարկություններ**

**ՀՀ Կառավարությանը՝**  
 Օգտակար հանաժոնների արդյունահանման նպատակով ընդերքի տրամադրման մեխանիզմը պարզեցնելու, ինչպես նաև պահանջվող փաստաթղթերի, արտոնագրերի, պայմանագրերի, լեռնահատկացման ակտերի և այլ թույլտվությունների տրման ընթացքում քաշքուկները բացառելու համար նպատակահարմար է բարեփոխել կառավարման համակարգը, այսպես կոչված՝ «մեկ պատուհանի» սկզբունքով:

**ՀՀ բնապահպանության նախարարությանը.**  
 1. ՀՀ օրենսդրությամբ հաստատված ժամկետներում ապահովել երկրաբանահետախուզական աշխատանքների և հանքավայրերի շահագործման նպատակով պայմանագրերի կնքումը:  
 2. Ապահովել օգտակար հանաժոնների պաշարների շարժի հավաստի հաշվառումը:

8 միլիոն 570 հազար դրամ գումարի փոխարեն հատկացրել են ընդամենը 150.0 հազ. դրամ:

Առանձին դեպքերում, արդյունահանման և ընդերքն օգտակար հանաժոնների շահագործման նպատակով ուսումնասիրության հատուկ լիցենզիաները տրվել են ժամկետների խախտմամբ: Իսկ արդյունահանման հատուկ լիցենզիա և արդյունահանման լիցենզիա ունեցող թվով 224 կազմակերպություններից 103-ի հետ լիցենզային պայմանագրերը կնքվել են 1-ից՝ 14 ամիս ուշացումով:

**2.2.5. Ընդհանուր իրավասության դատարաններ**

**Խախտվել է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը.**

«04.09.05. Դատավորների վերապատրաստման գծով պետական պատվեր» ծրագրով հատկացված ամբողջ գումարը՝ 32,911.2 հազ. դրամ, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համաձայնությամբ «Այլ ծառայությունների ձեռքբերում» հոդվածից վերաբաշխվել է այլ ծախսային հոդվածների:

«04.09.05. Դատավորների վերապատրաստման գծով պետական պատվեր» ծրագրով՝ «5600 Այլ ծառայությունների ձեռքբերում» հոդվածով ՀՀ վճարել դատարանին հատկացված 35,257.2 հազ. դրամից ՀՀ Կառավարության 16.12.2004 թվականի թիվ 1766-Ն որոշումով 2,346.0 հազ. դրամ վերաբաշխվել է «03.03.01. Դատական իշխանության մարմինների պահպանում» ծրագրին: Ծրագրի մնացած 32,911.2 հազ. դրամը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համաձայնությամբ վերաբաշխվել է այլ ծախսային

հոդվածների, դրանով իսկ խախտվել է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը՝ գերազանցվել է ծրագրով սահմանված հատկացումների ընդհանուր գումարի ներքին վերաբաշխումների թույլատրելի 15% չափաքանակը:

Ուսումնասիրվել է դատարանների 2004 թվականի հաստիքացուցակների համապատասխանությունը օրենքներին և սահմանված նորմատիվներին: Համաձայն «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի՝ «Առաջին ատյանի դատարանի յուրաքանչյուր դատավորի համար նախատեսվում են

դատական նիստերի քարտուղարի և օգնականի մեկական հաստիք»։ Սակայն Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանում 2004 թվականին հաստիքացուցակով հաստատվել և աշխատել է սահմանվածից մեկով ավելի դատական նիստերի քարտուղար, որի տարեկան աշխատավարձը կազմել է 335.0 հազ. դրամ։

Առանձին դատարաններ հաստիքները արհեստականորեն 0.5 դրույքաչափի կիսելու հետևանքով, «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ» հոդվածով թույլ են տվել գերաձախս։ Այսպես, Կենտրոն և Նորք-Մարաշ, Ավան և Նոր-Նորք համայնքների առաջին ատյանի դատարանները հաշվարկվածից ավելի են ծախսել համապատասխանաբար՝ 222.0 և 24.0 հազ. դրամ։

Վերահսկողության միջոցառումներ	արդյունքում	ձեռնարկված
<ul style="list-style-type: none"> <li>• ՀՀ Կառավարության 23.06.2005 թ. 217-Ն և 218-Ն որոշումներով ՀՀ վճռաբեկ դատարանին տրամադրվել է աուդիտորի հաստիք և սահմանվել է նրա պաշտոնային դրույքաչափը։</li> <li>• ՀՀ Կառավարության 12.05.2005 թ. 732-Ա որոշմամբ հաստատվել են ՀՀ դատարանների կապի և կոմունալ ծախսերի նորմաները։</li> <li>• «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքների պահանջների կատարումն ապահովելուն ուղղված հանձնարարականներ են տրվել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին և ՀՀ Կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետին։</li> <li>• ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի ղեկավարը, իր դիմումի համաձայն, ազատվել է աշխատանքից։</li> <li>• Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի աուդիտորը ազատվել է աշխատանքից՝ իր դիմումի համաձայն։ Դատարանի նախագահի հրամանով աշխատանքի է ընդունվել աուդիտորի մասնագիտությանը համապատասխանող որակավորում ունեցող անձ։</li> <li>• Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի նախագահի հրամանով աշխատանքի է ընդունվել աուդիտորի մասնագիտությանը համապատասխանող որակավորում ունեցող անձ։</li> </ul>		

Ի կատարումն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի ա) մասի պահանջի, դատարաններում ապահովվել է ներքին աուդիտի համակարգի առկայությունը։ Բացառություն են կազմել ՀՀ վճռաբեկ դատարանը, որին աուդիտորի հաստիք ՀՀ Կառավարությունը չի նախատեսել, Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը, որի աուդիտորի հաստիքը ամբողջ տարվա ընթացքում եղել է թափուր, իսկ Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի աուդիտորը չունի համապատասխան մասնագիտական կրթություն։

«Կապի ծառայությունների վճար» հոդվածով առաջին ատյանի բոլոր դատարաններին հատկացված միջոցները բավարարել են միայն քաղաքային հեռախոսների արժեքներին վճարները կատարելուն։ «Էլեկտրաէներգիայի ծախսեր» հոդ-

վածով Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանը թույլ է տվել 2,034.0 հազ. դրամի գերաձախս։ Հաշվի առնելով նախորդ տարիների պարտքը, առ 01.01.2005 թ. նշված հոդվածով դատարանում գոյացել է 3,450.9 հազ. դրամի կրեդիտորական պարտք։

Համաձայն դատարանների կողմից ներկայացված տեղեկատվության և հաշվետվությունների, 2004 թվականին գանձվել է 954,028.1 հազ. դրամի պետական տուրք, իսկ համաձայն ՀՀ ֆինանսների և

Էկոնոմիկայի նախարարության տեղեկատվության՝ 2004 թ.

ՀՀ պետական բյուջեի գանձապետական 900005016010 և 900005169264 հաշիվներին վճարվել է համապատասխանաբար՝ 460,219.0 և 884,455.3 հազ. դրամ կամ ընդամենը՝ 1,344,674.3 հազ. դրամ պետական տուրք: Դատարանների ու ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության

ՊԱՏ ստորաբաժանումների կողմից ներկայացված հայցադիմումների համար վճարված պետական տուրքը հիմնականում չի արտացոլվել դատարանների հաշվետվություններում:

կողմից ներկայացված տեղեկատվության միջև տարբերությունը՝ 390,646.2 հազ. դրամ, պայմանավորված է դատական համակարգում պետական տուրքի գանձման հաշվառման միասնական կարգի

**Առաջարկություններ**

**ՀՀ Կառավարությանը՝**

Բյուջետային ծրագրերի իրականացման ընթացքում սահմանել պատշաճ հսկողություն՝ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով նախատեսված ներքին հողվածային վերաբաշխումների թույլատրելի չափաքանակը չգերազանցելու նկատմամբ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի համապատասխան՝ վերահսկողություն իրականացնել պետական տուրքի հաշվարկման և գանձման կարգի նկատմամբ, ապահովելով դատարանների կողմից գանձվող պետական տուրքի ամբողջական հաշվառումը:

բացակայությամբ: Այսպես, 2004 թվականին ՀՀ Կառավարությանն առընթեր ոստիկանության պետական

ավտոտեսչության (*այսուհետ՝ ՊԱՏ*)

ստորաբաժանումների կողմից ներկայացված հայցադիմումների համար (յուրաքանչյուրը՝ 1500 դրամ) գանձապետական 900005169264 հաշիվն վճարվել է

116,000.0 հազ. դրամ պետական տուրք: Նշված գումարը հիմնականում չի արտացոլվել դատարանների հաշվետվություններում: ՊԱՏ ստորաբաժանումների հայցադիմումների համար վճարված ամբողջ պետական տուրքը ներառել են հաշվետվություններում միայն Մալաթիա-Սեբաստիա համայնքի և Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանները, մնացած

դատարանները կամ չեն արտացոլել, կամ հաշվետվություններում ներառել են տարվա ընթացքում ՊԱՏ կողմից ներկայացված և լաված հայցադիմումների թվին համապատասխան պետական տուրք: Ավան և Նոր-Նորք համայնքների, Արագածոտնի և Արարատի մարզերի առաջին ատյանի դատարաններում ՊԱՏ ստորաբաժանումների հայցադիմումների համար իրականացվել է պետական տուրքի կրկնակի գանձում (ի օգուտ պետական բյուջեի՝ 1500 դրամը գանձվել է մաս պատասխանող քաղաքացիներից):

Դատարանների հաշվետվություններում նախատեսված չէ հաշվառել դատաքննության ավարտից հետո դատական վճիռներով գանձման ենթակա և կամովին վճարված պետական տուրքը, որի իրականացումը, Վերահսկիչ պալատի կարծիքով, կնպաստի ցուցանիշների ամբողջական արտացոլմանը:

Ուսումնասիրության արդյունքներով դատարանների կողմից գանձվել և պետական բյուջե վերականգնվել է 818.1 հազ. դրամ

Ընտրանքային ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է 2004 թվականին գանձման ենթակա, սակայն չգանձված պետական տուրք՝ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում՝ 717.2 հազ. դրամ, Քաղաքացիական գործերով վերաքննիչ

դատարանում՝ 100.9 հազ. դրամ: Ուսումնասիրությունների արդյունքներով Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի և Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանները նշված պետական տուրքը գանձել ու վերականգնել են ՀՀ պետական բյուջե:

**2.2.6. ՀՀ պետական տուրքերի և պետական բյուջեի հարկային եկամուտների հավաքման մասին**

**ՀՀ Կառավարությանն առընթեր ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն**

2005 թվականի ընթացքում վերահսկողություն է իրականացվել ՀՀ Կառավարությանն առընթեր ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության (*այսուհետ՝ ԱՎ վարչություն*) կողմից պետական տուրքերի հավաքման նկատմամբ:

ԱՎ վարչությունը 01.01.2002 - 31.12.2004 թվականների ժամանակաշրջանում մատուցել է 198416 ծառայություն, որի դիմաց գանձվել է 896,285.7 հազ. դրամ և 3,222,423.0 ԱՄՆ դոլար, սակայն ՀՀ ոստիկանության ու ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կենտրոնական գանձապետարանի կողմից ներկայացված պետական տուրքի փաստացի հավաքման ցուցանիշների միջև անհամապատասխանություն է արձանագրվել: Հաշվետու ժամանակաշրջանում «ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար» հաշվում փաստացի կուտակվել են 68,095.3 հազ. դրամով ավելի դրամական միջոցներ, իսկ «ՀՀ քաղաքացիություն շնորհելու և ՀՀ քաղաքացիությունը փոխելու համար» 2,482.1 հազ. դրամով պակաս, քան արտացոլված է ՀՀ ոստիկանության փաստաթղթերում:

ՀՀ ոստիկանության կողմից ԱՎ վարչությանը պետական տուրքի հավաքման մասով տարեկան առաջադրանքներ չեն իջեցվել:

**Առաջարկություններ**

**ՀՀ Կառավարությանն առընթեր ոստիկանությանը՝**

Ուժեղացնել ներքին վերահսկողությունը հաշվետվությունների կազմման և ամփոփման գործընթացի նկատմամբ, ինչպես նաև ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ կատարելագործել հաշվետվողականության համակարգը:

ԱՎ վարչության սահմանային ծառայությունների կողմից կանխիկ գանձված պետական տուրքը երկու բանկային օրվա ընթացքում մուտքագրել համապատասխան գանձապետական հաշվին, բանկային գործառնություն իրականացնող մոտակա կազմակերպությունում անմիջականորեն կամ կանխիկ դրամի շրջանառությունը կանոնակարգելու նպատակով պայմանագիր կնքել ինկասացիա իրականացնող ծառայության հետ:

Ուժեղացնել ընթացիկ հսկողությունը գանձված պետական տուրքի առանձին տեսակները համապատասխան բյուջետային հաշվին մուտքագրելու ուղղությամբ:

Նպատակահարմար է ԱՎ վարչության կողմից հավաքագրվող բոլոր պետական տուրքերը մուտքագրել պետական բյուջեի մեկ հաշվարկային հաշվին:

*Չի ապահովվել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջը, այն է՝ գանձված պետական տուրքի գումարները գործողություններ կատարող կամ ծառայություններ մատուցող մարմինները բանկ են մուծում հաջորդ երկու բանկային օրվա ընթացքում:*

*ԱՎ վարչության կողմից ՀՀ քաղաքացիություն շնորհելու և ՀՀ քաղաքացիությունը փոխելու համար մատուցած ծառայությունների դիմաց գանձվող պետական տուրքը, որոշ դեպքերում, փոխանցվել է այլ գանձապետական (բյուջետային) հաշվին:*

*Չի ապահովվել ՀՀ Կառավարության՝ «ՀՀ անձնագրային համակարգի կանոնադրությունը և*

ՀՀ քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» 25.12.1998 թվականի թիվ 821 որոշման 4-րդ կետով սահմանված պահանջը՝ ՀՀ քաղաքացիներին ռուսերեն լեզվով ներդիր չի տրվել և դրա դիմաց պետական տուրք չի գանձվել:

**ՀՀ Կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն**

2005 թվականի ընթացքում վերահսկողություն է իրականացվել ՀՀ Կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունում (*այսուհետ՝ ՀՀ ԿԱ ՀՊԾ*) հարկային եկամուտների գանձման, նյութական խրախուսման և սոցիալական զարգացման ֆոնդի ձևավորման ու օգտագործման՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխանության նկատմամբ:

Ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ 2003 և 2004 թվականների ընթացքում հարկահավաքման գործընթացի մակարդակը համարժեք չի եղել տնտեսական աճի տեմպերին, որը պայմանավորված է համախառն ներքին արդյունքի կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ կազմող հարկման արտոնյալ դաշտում գործող ոլորտների, ինչպես նաև հարկային եկամուտների ծրագրային ցուցանիշների ցածր մակարդակով:

Թերհավաքումները մասամբ փոխհատուցվել են կարգապահ հարկատուներից գերավճարների հավաքագրմամբ

ՀՀ ԿԱ ՀՊԾ կողմից ոչ միշտ են բավարար միջոցներ ձեռնարկվել պետական բյուջեի նկատմամբ առաջացած հարկային պարտավորությունների ամբողջական և ժամանակին գանձման ուղղությամբ, մեծ չափերի հասնող թերհավաքումները մասամբ փոխհատուցվել են կարգապահ հարկատուներից գերավճարների հավաքագրմամբ: Ուսումնասիրվող ժամանակահատվածում արձանագրվել է գերավճարների գծով աճ՝ 36.2%-ով:

Աղյուսակ 7

**2003 և 2004թթ. ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ապառքների, գերավճարների և հարկային պարտավորությունների վերաբերյալ**

մլն դրամ

Հարկատեսակ	01.07.03թ. դրությամբ			01.01.04թ. դրությամբ			01.01.05թ. դրությամբ		
	Ապառք	Գերավճար	Հարկային պարտավորություն	Ապառք	Գերավճար	Հարկային պարտավորություն	Ապառք	Գերավճար	Հարկային պարտավորություն
<b>ԱԱՀ</b>	43692.8	20416.4	88545.0	51181.8	24010.0	99258.6	51658.9	26249.2	96868.3
<b>Շահութահարկ</b>	19162.2	4563.0	46105.6	20123.9	5872.0	49053.2	26053.5	7035.1	54766.4
<b>Ակցիզային հարկ</b>	3752.9	654.3	7072.0	3203.5	862.7	6880.7	3094.7	626.4	6568.1
<b>Եկամտահարկ</b>	7918.4	4698.5	16083.7	8256.1	5937.0	16622.3	8538.4	6325.2	16197.3
<b>Հաստատագրված վճար</b>	1283.3	745.8	2322.4	1330.7	910.0	2410.2	1315.8	1717.9	2285.9
<b>Այլ</b>	1179.5	1426.9	6228.0	991.2	2716.2	6316.0	1047.6	2324.0	8796.0
<b>Ընդամենը</b>	76989.1	32504.8	166356.7	85087.2	40307.9	180541.0	91708.9	44277.8	185482.0



Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչությունում բավարար միջոցառումներ չեն իրականացվել ինչպես տնտեսավարող սուբյեկտներում ստուգումներ իրականացնելու, այնպես էլ ստուգման ակտերով հայտնաբերված գումարների հետագա գանձումն ապահովելու ուղղությամբ: Հարկային ձարտավորություններից մարվել է ընդամենը 461,701.2 հազ. դրամ, որը կազմում է խոշոր հարկ վճարող սուբյեկտների հարկային պարտավորությունների շուրջ 1%-ը:

*Թվով 12 կազմակերպություններում 2003 և 2004 թվականների ընթացքում խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից չեն կատարվել պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգումներ, որոնցից 6-ի դեպքում արդեն կիրառելի է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով սահմանված դրույթը, այն է՝ «Հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարվելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո»:*

Ուսումնասիրության արդյունքներով ծառայությանը առաջարկվել է ստուգման ակտերով հայտնաբերված գումարների հետագա գանձումն ապահովելու, հարկային վարչարարության մեխանիզմները կատարելագործելու միջոցով հարկային եկամուտների մուտքը առաջնահերթ ապահովել հարկային պարտավորություններ ունեցող տնտեսավարող սուբյեկտներից: Կատարելագործել տնտեսավարող սուբյեկտներում ստուգումների իրականացման գործառնությունները, բավարար միջոցներ ձեռնարկել պետական բյուջեի նկատմամբ առաջացած հարկային պարտավորությունների ամբողջական և ժամանակին գանձումն ապահովելու ուղղությամբ:

### **2.2.7. ՀՀ արտաքին գործերի նախարարություն, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնությունում ՀՀ դեսպանատուն**

Ուսումնասիրելով ՀՀ արտաքին գործերի նախարարությանը (*այսուհետ՝ ՀՀ ԱԳՆ*), այդ թվում Ռուսաստանի դաշնությունում ՀՀ դեսպանատանը 2004 թվականին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և եկամուտների առանձին տեսակների գծով մուտքերի հավաքման համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը, արձանագրվել է.

#### **ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման վերաբերյալ՝**

1. ՀՀ ԱԳՆ 2004 թ. պետական բյուջեից նախատեսվել էր հատկացնել է 5,904,846.8 հազ. դրամ: Ֆինանսավորումը կազմել է՝ 5,690,675.5 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 5,634,382.6 հազ. դրամ, կամ նախատեսվածի 95.4%-ը:

Միաժամանակ, ԱԳՆ 2004 թ. ՀՀ գործող օրենսդրությամբ ստանձնած, վճարման ենթակա պարտավորություններից բացի, կատարվել են այլ վճարումներ.

- ՀՀ պետական բյուջեի 2004 թ. օրենքով (գործառնական դասակարգման 01.03.01 ծրագիր) հատկացված միջոցների հաշվին, առանց իրավական հիմքի, դեկտեմբեր ամսին պարզատրվել են դիվանագիտական ծառայողներ և աշխատակիցներ՝ 555.1 հազ. դրամի չափով,
- «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված քաղաքացիական ծառայողների պագևատրման աղբյուրների, չափի և կարգի խախտմամբ, նախարարության քաղծառայողներին ավելի է հաշվարկվել և վճարվել 1,618.8 հազ. դրամ:

2. Խախտվել է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետը, այն է՝ առանց ՀՀ Կառավարության համապատասխան որոշման, նախարարության կողմից կատարվել է 7,063.4 հազ. դրամի ֆինանսական վերաբաշխում՝ ՀՀ պետական բյուջեի 2004 թ. օրենքի 01.03.03 (ՀՀ դեսպանությունների և ներկայացուցությունների պահպանում) ծրագրից, 01.03.01 (ՀՀ ԱԳՆ պահպանում) ծրագրին, որը ֆինանսական հաշվետվությունում չի արտացոլվել:

**ՀՀ պետական բյուջեով նախատեսված եկամուտների հավաքման վերաբերյալ**

1. Տարեկան հաստատված նախահաշվով օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանությունների և ներկայացուցությունների վարչատնտեսական աշխատողների թվակազմ և դրույքաչափեր չեն հաստատվել:

Դեսպանությունների վարչատնտեսական անձնակազմին փաստացի վճարած աշխատավարձից (և դրան հավասարեցված վճարներից), որը կազմում է 923.6 հազ. ԱՄՆ դոլար, եկամտահարկ, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ (ՀՀ քաղաքացիներից) չի հաշվարկվել և ՀՀ պետական բյուջե ու Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ չի փոխանցվել:

2. 2004 թ. ՌԴ-ում ՀՀ դեսպանության կողմից, համաձայն ՀՀ ԱԳՆ ներկայացված ֆինանսական հաշվետվությունների, մատուցված հյուպատոսական ծառայությունների դիմաց ամենօրյա գանձումները հյուպատոսի կողմից դեսպանատան դրամարկղ են հանձնվել մեկ արձանագրությամբ:

Դրամարկղի վարման կարգի համաձայն, չի տարվում մուտքի անդորրագրերի, որպես խիստ հաշվառման փաստաթղթերի, հաշվառում, հանձնում, հետ վերադարձ:

3. Խախտվել է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 32, 35, 36-րդ հոդվածները:

Ավելին՝ այն դեսպանությունները և հյուպատոսական հիմնարկները, որոնք գանձված գումարը կանխիկ մուտքագրում են նախարարության դրամարկղ, առանձին դեպքերում փոխանցում են ՀՀ պետական բյուջե՝ անթույլատրելի ուշացումներով:

Դիվանագիտական ներկայացուցությունները, հիմնականում, մինչև ընթացիկ ֆինանսավորումը, պետական տուրքի գծով գանձված գումարները օգտագործում են ընթացիկ ծախսերի համար, իսկ Ֆրանսիայի և Արգենտինայի՝ ՀՀ դեսպանությունների կողմից գանձված պետական տուրքի գումարների չափով, ՀՀ ԱԳ նախարարությունը դիվանագիտական հիմնարկների պահպանման ծախսերից փոխանցում է ՀՀ պետական բյուջե:

**ՀՀ արտաքին գործերի նախարարության «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման մասին**

1. ՀՀ պետական բյուջե հետ վերադարձնելու փոխարեն հավելյալ նախատեսվել և վճարվել է 1,467.9 հազ. դրամ աշխատավարձին հավասարեցված վճարումներ, որով խախտվել է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի թ) կետը:

2. «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ մասով սահմանված քաղաքացիական ծառայողների պագևատրման աղբյուրների, չափի և կարգի խախտմամբ, 2004 թվականի ընթացքում հաշվարկվել և վճարվել է 522.7 հազ. դրամ հավելավճար:

3. Չի կատարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները՝ բյուջետային հատկացումների հաշվին գործակալության կողմից կնքված ուղղակի պայամանագրերը չեն

պարունակել գնվող ապրանքների, ծառայությունների չափորոշիչներ, բնութագիր, քանակ, նկարագիր, գին:

### Առաջարկություններ

#### ՀՀ Կառավարությանը՝

Հաշվի առնելով ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների մասով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 32-րդ և 36-րդ հոդվածների պահանջների գործնական կիրառման դժվարությունները, անհրաժեշտ է նշված օրենքում կատարել փոփոխություններ.

- **32-րդ Հոդվածի 4-րդ մասից** հետո օրենքը լրացնել հետևյալ պարբերությունով՝ «Օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների կողմից իրականացված գործողությունների և մատուցած ծառայությունների համար գանձված պետական տուրքի գումարները համապատասխան գործողություններ կատարող կամ ծառայություններ մատուցող մարմինները բանկ են մուծում (բյուջե փոխանցում) համապատասխան գործողությունների կատարման, ծառայությունների մատուցման հաջորդող ամսվա առաջին երկու բանկային օրվա ընթացքում»:

- **36-րդ Հոդվածի 3-րդ մասը** շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների կողմից իրականացվող գործողությունների և մատուցած ծառայությունների համար պետական տուրքերը կարող են վճարվել արտարժույթով՝ հիմք ընդունելով տվյալ տարվա պետական բյուջեի ցուցանիշների հաշվարկման հիմքում դրված արտարժույթի՝ դրամով արտահայտված հաշվարկային փոխարժեքը»:

#### Հաշվի առնելով ԱԳՆ-ի գործառնությունների առանձնահատկությունները՝

- Անհրաժեշտ է կանոնակարգել պաշտոնական այցերի կամ պաշտոնական գործուղումների ժամանակ փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունների ընդունման և ձևակերպման կարգը:

- Ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ Ռուսաստանի Դաշնությունում ՀՀ դեսպանատան շենքի իրավական կարգավիճակը հստակեցնելու ուղղությամբ:

#### ԱԳ նախարարությանը՝

- Ձեռնարկել միջոցառումներ աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները գործող օրենսդրությանը համապատասխանեցնելու, հաշվետվական կարգապահությունը բարձրացնելու, խիստ հաշվառման փաստաթղթերի վարման գործընթացը կանոնակարգելու ուղղությամբ:

- Հյուպատոսական գանձումներն իրականացնել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

## 2.3. Պետական պատվերի և ծրագրերի կատարման նպատակով պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման մասին

### 2.3.1. ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ

Ռուսումնասիրվել է ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին պետական պատվերի և ծրագրերի կատարման նպատակով 2004 թվականին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Հիմնադրամի կողմից չի իրականացվել վարչական իրավախախտումների գծով շուրջ 832.65 մլն դրամի գանձում

«ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ընդունվել է Հիմնադրամի 2004 թվականի բյուջեն, համաձայն որի Հիմնադրամի ընդհանուր եկամուտները և ծախսերը սահմանվել են 68,258.9 մլն. դրամ, այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ՝ 53,000.0 մլն. դրամ և պաշտոնական տրանսֆերտներ՝ 15,258.9 մլն. դրամ: Հիմնադրամի 2004 թվականի փաստացի եկամուտները, ներառյալ՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող սոցիալական ծրագրերի ֆինանսավորման նպատակով հատկացվող միջոցները, կազմել են շուրջ 65,983.3 մլն դրամ, որից պաշտոնական տրանսֆերտներ՝ 15,155.2 մլն դրամ:

Ուսումնասիրությամբ արձանագրվել է.

1. Հիմնադրամի բյուջեով 2004 թ. համար նախատեսվել էր հավաքագրել 53,000.0 մլն դրամի պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ, մինչդեռ փաստացի հավաքագրվել է 50,828.16 մլն դրամ (թերհավաքագրումը կազմել է 2,171.84 մլն դրամ), կամ նախատեսվածի 95.9%-ը:
2. Պետական ռեզիստրում գրանցված և հիմնադրամում հաշվառված ապահովադիրների միջև առկա է տարբերություն 01.01.2004 թ. դրությամբ, գործատու՝ 4898, անհատ ձեռներեց՝ 12636, ընդամենը՝ 17534, իսկ 01.01.2005 թ. դրությամբ, գործատու՝ 5396, անհատ ձեռներեց՝ 15829, ընդամենը՝ 21255: Պետական հիմնադրամում հաշվառված 104,083 ապահովադիրներից հարկային պետական ծառայության կողմից տրամադրված տվյալների բազայով 2004 թ. համար հայտարարագրեր են ներկայացրել անհատ ձեռներեց՝ 13472, գործատու՝ 28571, ընդամենը՝ 42043, որը կազմում է հաշվառվածների 40.4%-ը:
3. Թվով 51 տարածքային կենտրոններ (այսուհետ՝ *Տ/Կ*) շարունակում են գործել հին կանոնադրությամբ

### Առաջարկություններ

#### ՀՀ Կառավարությանը՝

- Պաշտոնական տրանսֆերտների հաշվառումը հստակեցնելու նպատակով անհրաժեշտ է ունենալ գանձապետական առանձին հաշիվ:
- Հստակեցնել Հիմնադրամի աշխատակիցների կարգավիճակի հարցը:

#### Պետական հիմնադրամին՝

1. Տարածքային կենտրոնների համար հաստատել նոր կանոնադրություն և իրականացնել պետական ռեզիստրում հաշվառում: Կանոնակարգել վարձակալության պայմանագրերի գործընթացը, ապահովելով նոտարական վավերացումը և իրավունքի պետական գրանցումը:
2. Տարածքային կենտրոնների համար նորմավորել գործողման, ծառայողական մեքենաների, կապի, էլեկտրաէներգիայի, ջեռուցման ծախսերը:
3. Կենսաթոշակների հաշվառման, նշանակման և վճարման գործընթացը կանոնակարգելու համար անհրաժեշտ է իրականացնել կենսաթոշակառուների գործերի գույքագրում և աստիճանաբար անցնել կենսաթոշակների վճարման անկանխիկ համակարգի:
4. Պաշտոնական տրանսֆերտներից ֆինանսավորումն իրականացնել բացառապես առանձին կարգագրերով և վճարման առանձին ցուցակներով:
5. Ծախսային հոդվածների (ըստ բյուջետային ծախսերի դասակարգման) շեղումները կատարել բացառապես վերադաս կազմակերպության թույլտվությամբ:
6. Կենսաթոշակների և այլ սոցիալական ապահովագրության պետական ծրագրերի ֆինանսավորման գործընթացը իրականացնել միայն գանձապետական համակարգի միջոցով (բացառելով առևտրային բանկերի միջոցով ծառայությունների մատուցումը):

և

չունեն պետական ռեզիստրում հաշվառում, որով խախտվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջները:

Տ/Կ-ի պահպանման ծախսերի նախահաշիվները 2004 թ. ընթացքում 3-8 անգամ ենթարկվել են փոփոխությունների, առանց խորհրդի համապատասխան որոշումների:

Տարածքային կենտրոնների կողմից վարձակալական տարածքների համար կնքված պայմանագրերի 98%-ը չունեն նոտարական վավերացում և իրավունքի պետական գրանցում, ընթացիկ տարում կատարվել է վարձավճարների դրույքաչափերի չհիմնավորված բարձրացում: 01.01.2005 թ. դրությամբ հաստիքային միավորները կրճատելուց հետո (միջինը 35%-ով ազատվել են տարածքներ, սակայն տարածքների պայմանագրային փոփոխություններ չեն կատարվել), թույլ են տրվել վարձակալական տարածքների հետ կապված գումարների չհիմնավորված ծախսեր (Գ.յուրու Տ/Կ-ում 8.1 հազ. ԱՄՆ դոլարի կամ 4.2 մլն դրամի), իսկ որոշ տարածքային կենտրոններում չհիմնավորված վերանորոգման աշխատանքներ են կատարվել (Մաշտոցի Տ/Կ-ում` 249 հազ. դրամի, Դավթաշենի Տ/Կ-ում` 432.0 հազ. դրամի):

4. Տ/Կ-ն իրենց ամրագրված գործառնություններն իրականացրել են մի շարք խախտումներով և սխալներով.
- Տ/Կ-րում երեխաներին միանվագ նպաստների հաշվառման, նշանակման և վճարման գործընթացը իրականացվել է խախտումներով և սխալներով
  - սոցիալական և ապահովագրական կենսաթոշակների ֆինանսավորումը կատարվել է միասին,
  - դրամական օգնությունը և պատվովճարը բյուջեում ներկայացված են առանձին հոդվածով և տողով, սակայն տարածքային կենտրոնները այդ հոդվածների վերաբերյալ ֆինանսավորված գումարը վճարել են մեկ հոդվածով և մեկ տողով:
5. Հստակեցված չէ Հիմնադրամի աշխատակիցների կարգավիճակի հարցը:

**2.3.2. «Հիվանդանոցային բուժօգնություն», «Առաջնային բուժօգնություն», «Հիգիենիկ - հսկահամաճարակային ծառայություններ» առողջապահական ծրագրեր**

Առողջապահությանը պետական բյուջեից հատկացումները 2002 թ. կազմել է 16.0, 2003 թ.` 21.0, իսկ 2004 թ.` 25.0 մլրդ դրամ:

ՀՀ առողջապահության նախարարությանը (այսուհետ` ՀՀ ԱՆ) պետական պատվերի և ծրագրերի կատարման նպատակով 2004 թ. պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման ՀՀ օրենսդրությանը համապատասխանության ուսումնասիրությամբ արձանագրվել է.

1. 2004 թ. պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու նպատակով «Հայաստանի

- Համաձայն ՊԱԳ-ի հետ կնքած պայմանագրի հատուկ պայմաններ բաժնի 1.2-րդ կետի, սահմանվել է, որ աշխատավարձը առանց վրանկի պետք է լինի հաստատված բյուջեի 40%-ից ոչ պակաս, որը չի պահպանվել և կազմել է 23,4-30 %:
- Համաձայն ՊԱԳ-ի հետ կնքած պայմանագրի հատուկ պայմաններ բաժնի 4.4-րդ կետի, սահմանվել է, որ վճարովի ծառայությունների գնացուցակը պետք է հաստատվի հիմնադրի կողմից, սակայն կան դեպքեր, երբ դա հաստատված չի եղել հիմնադրի կողմից:

Հանրապետության 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով պետական առողջապահական գործակալության (այսուհետ` ՊԱԳ) մասով նախատեսվել էր 20.0 մլրդ դրամ, որից հիվանդանոցային բուժօգնություն` 12.8 մլրդ դրամ, ամբուլատոր- պոլիկլինիկական` 7.2 մլրդ դրամ:

2004 թ. ընթացքում ՀՀ Կառավարության

որոշումներով կատարվել է բյուջեի վերաբաշխում, որի արդյունքում ՊԱԳ-ի մասով 2004 թվականի ճշգրտված բյուջեն կազմել է 18.9 մլրդ դրամ, որից՝ հիվանդանոցային բուժօգնություն՝ 12.7 մլրդ դրամ, ամբուլատոր պոլիկլինիկական՝ 6.2 մլրդ դրամ: Տարվա ընթացքում տարեկան աշխատանքների փաստացի ծավալը ֆինանսավորվել է ամբողջությամբ:

2. ՀՀ ԱՆ կողմից սահմանված չէ բուժսարքավորումների և պարագաների բաշխման, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստացող հիվանդների հաշվառման և հերթագրման կարգը:
3. ՀՀ ԱՆ աշխատակազմում 2004 թ. ընթացքում չի գործել ներքին աուդիտը:
4. ՀՀ ԱՆ պետական հիգիենիկ-հակահամաճարակային տեսչությունում (*այսուհետ՝ ՊՀՀ*) բավարար չափով չեն իրականացվել վարչական իրավախախտումներով սահմանված պատժամիջոցները:  
ՊՀՀ տեսչության կողմից հսկողության ենթակա 10805 կազմակերպություններից սանիտարական կանոնների և նորմերի, հիգիենիկ նորմատիվների վերաբերյալ ստուգվել են թվով 3649-ը և ուսումնասիրվել՝ 4139-ը, որի արդյունքում կիրառվել են վարչական միջոցառումներ, այդ թվում՝ տուգանք՝ 66396.0 հազ. դրամ գումարով, գանձվել է ընդամենը 2083.0 հազ. դրամ (3,1 %):
5. ՊՀՀ տեսչության տարածքային կենտրոնների պահպանման ծախսերի նախահաշիվներում արտաբյուջետային մուտքեր և ծախսեր նախատեսված չլինելու պարագայում մուտքագրվել է 30.0 մլն դրամ:
6. ՊՀՀ տեսչության կողմից 2004 թ. ընթացքում պետք է ձևավորվեին Սանիտարական կարանտինի 7 կետ, որոնք չեն ձևավորվել:
7. Բուժհաստատություններում բացակայում են բուժժառայությունների հաշվառման մատյանները, որով խախտվել է ՀՀ Կառավարության 2004 թ. հոկտեմբերի 14-ի թիվ 1432-Ն որոշման 2-րդ բաժնի 11-րդ կետի պահանջը:
8. Վճարովի կամ պետական պատվերի շրջանակներում բուժօգնություն և սպասարկում ստացած հիվանդների համար ծախսված դեղամիջոցների և բուժպարագաների հաշվառման մատյանները տարվում են կամայականորեն, ջնջումներով և սահմանված գների անհամապատասխան:
9. Առողջապահական կազմակերպությունների կողմից (23,4-30% սահմաններում) չեն պահպանվել ՊԱԳ-ի կնքած պայմանագրի հատուկ պայմաններ հավելվածի պահանջները:
10. Առողջապահական կազմակերպություններում խախտումներով և սխալներով են իրականացվել պետական պատվերի շրջանակներում մատուցված ծառայությունները:

**Առաջարկություններ**  
**ՀՀ Կառավարությանը՝**  
Սահմանել՝

- ժամկետանց դեղերի պահպանման և ոչնչացման կարգը.
- բուժսարքավորումների բաշխման և օգտագործման ընթացակարգը.
- պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստացող հիվանդների հաշվառման և հերթագրման կարգը:

առողջապահական կազմակերպությունների միջոցների հաշվին: Հստակեցված չէ վճարովի սկզբունքով իրականացվող բժշկական օգնության և սպասարկման շրջանակները:

11. Առողջապահական կազմակերպություններում բավականին մեծ քանակ են կազմում ժամկետանց դեղերը:

Ընկերություններն ինքնակամ կատարել են

Ժամկետանց դեղերի դուրսգրում: Մինչ ՀՀ Կառավարության համապատասխան որոշման և ոչնչացման կարգի հաստատումն առկա են նույնիսկ ժամկետանց դեղերի ոչնչացման դեպքեր (այրել, կոյուղի լցնել): «Մարդասիրական օգնության» ՊՈԱԿ-ում առկա էր շուրջ մեկ միլիարդ դրամի ժամկետանց դեղեր:

12. ՀՀ ԱՆ պետական հիգիենիկ-հակահամաճարակային տեսչության (*այսուհետ՝ ՊՀՀ*) կողմից չի ապահովվել համակարգում վարձակալական տարածքների պայմանագրերի կնքման, գույքային միավորի իրավունքի պետական գրանցման գործընթացը:

**2.3.3. «Աղքատության ընտանեկան նպաստների և միանվագ դրամական օգնություն» ծրագիր**

Ուսումնասիրվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (*այսուհետ՝ Նախարարություն*) պետական պատվերի և ծրագրի կատարման նպատակով 2004 թ. պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Արձանագրվել է.

1. Նախարարությունը, շրջանցելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները, չի ներկայացրել նպաստների վճարման ծառայության տեխնիկական բնութագիրը և ծառայությունների գնման հայտը «Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ին, այն դեպքում, երբ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 28.11.2002 թ. թիվ 796-Ա հրամանով «Ընտանեկան նպաստների և միանվագ դրամական օգնություն (*այսուհետ՝ ՄԳՕ*) վճարման ծառայությունը» ընդգրկվել է «Պարբերական մրցույթներով ձեռքբերվող ապրանքների և ծառայությունների» ցանկում:

Սակայն Նախարարությունը «Հայփոստ» ՓԲԸ-ի հետ 2004 թ. մայիսի 18-ին կնքել է նոր պայմանագիր՝

Նպաստների և ՄԳՕ ծրագրի շրջանակներում 2004 թ. ընթացքում «Հայփոստ» ՓԲԸ-ն 140.7 մլն դրամը փոխանցել է պետական բյուջե՝ պայմանագրով սահմանված ժամկետի խախտումով

«Նպաստների և ՄԳՕ-ի տրամադրման հետ կապված փոստային ծառայությունների ձեռքբերման գծով վճարումների ապահովում» ծրագրի իրականացման նպատակով:

Նախարարության կողմից չի կիրառվել պայմանագրի 5.4-րդ կետով սահմանված պահանջը՝ տեխնիկական բնութագրի պահանջները թերություններով կատարելու համար (երեք աշխատանքային օրվա ընթացքում չվճարված գումարները պետական բյուջե փոխանցելը), «Հայփոստ» ՓԲԸ-ն նախարարությանը պետք է վճարեր տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0.01 տոկոսի չափով:

2. 2004 թ. համար Երևանի քաղաքապետարանը թաղային համայնքների սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների (*այսուհետ՝ ՄԾՏԳ*) պատվիրակված լիազորությունների իրականացման հետ կապված ծախսերի կատարման նորմատիվները չի ներկայացրել ՀՀ Կառավարություն:

ՀՀ Կառավարության 2002 թ. դեկտեմբերի 26-ի թիվ 2153-Ն որոշմամբ, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի 12 ՄԾՏԳ-ն հանձնվել են Երևանի 12 թաղային համայնքների ենթակայությանը: 2004 թ. ընթացքում Երևանի թաղային համայնքների կողմից պատշաճ հսկողություն չի իրականացվել՝

- ՄԾՏԳ-ի կողմից զբաղեցրած տարածքների պայմանագրերի կնքման, պայմանագրերի կնքումից ծագած իրավունքների պետական գրանցման,
- պահպանման ծախսերի,

- սոցվճարների և եկամտահարկի հաշվետվություններում թույլ տրված հաշվապահական հաշվառման կարգի վարման խախտումների նկատմամբ:
- 3. Ի տարբերություն Երևանի ՄՃՏԳ-ի աշխատակիցների, մարզպետարանների ՄՃՏԳ-ի բոլոր աշխատակիցների աշխատավարձը, համաձայն «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի, 2003 թ. հուլիսի 1-ից բարձրացել է:
- 4. ՄԴՕ-ի նշանակման և վճարման հստակ չափորոշիչներ սահմանված չլինելու պատճառով, ՄՃՏԳ-ն կամայական մոտեցում են ցուցաբերել ՄԴՕ-ի նշանակման և վճարման գործընթացում:
- 5. Նախարարության կողմից ՄՃՏԳ-ի համար չի սահմանվել նպաստ համակարգում ընդգրկված ընտանիքների հաշվառման, նպաստի նշանակման և վճարման գործընթաց ապահովող մասնագետների թիվը և աշխատանքը կանոնակարգող չափորոշիչներ:
- 6. Նախարարության կողմից պատշաճ հսկողություն չի իրականացվել ՄՃՏԳ-ի կողմից ՀՀ

**Առաջարկություններ**

**ՀՀ Կառավարությանը՝**

- Նպաստները ճիշտ հասցեագրելու նպատակով, սահմանել նպաստառու ընտանիքներին ՄԴՕ-ի վճարման առաջնահերթության ցանկ:

**Նախարարությանը՝**

- Միջոցներ ձեռնարկել «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման ուղղությամբ:
- Հսկողություն սահմանել ՄՃՏԳ-ի կողմից ՀՀ Կառավարության 2000 թվականի հունիսի 3-ի՝ նպաստների և ՄԴՕ նշանակման և վճարման կարգի մասին թիվ 350 որոշման պահանջների կատարման ուղղությամբ:
- Սահմանել հստակ չափորոշիչներ՝ նպաստառու ընտանիքները ՄԴՕ-ի վճարման ցուցակներում ընդգրկելու ուղղությամբ:
- ՄՃՏԳ-ներում սահմանել նպաստ համակարգում ընդգրկված ընտանիքների հաշվառման, նպաստի նշանակման և վճարման գործընթացն ապահովող մասնագետների թիվը և աշխատանքը կանոնակարգող չափորոշիչներ:

Կառավարության 2000 թ. հուլիսի 3-ի՝ նպաստների և ՄԴՕ նշանակման և վճարման կարգի մասին թիվ 350 որոշման պահանջների կատարման նկատմամբ:

Վճարման ցուցակները, ռեեստրները տարվել են խախտումներով և սխալներով, առկա են դեպքեր, երբ նպաստառուի ստորագրությունը մեկ այլ թղթի վրա ստորագրված և փակցված է վճարման ցուցակներում (Ավան ՄՃՏԳ):

7. ՄՃՏԳ-ում թվով շուրջ 45387 փաստագրված ընտանիքներ չեն ընդգրկվել ՄԴՕ վճարման ցուցակներ այն դեպքում, երբ պետությունը նախատեսված ծրագրով գումարի նկատմամբ տնտեսումը կազմել է 316.0 մլն դրամ:

8. 2004 թ. ընթացքում ՀՀ մարզերի 43, Երևան քաղաքի 12 ՄՃՏԳ-ը չեն վերագրանցվել, գործել են հին կանոնադրությամբ և կնիքով՝ որպես տարածքային կենտրոններ:



**2.3.4. «Միջին մասնագիտական կրթություն», «Հատուկ ընդհանուր կրթություն» և «Գիտություն» ծրագրեր**

Ուսումնասիրության արձանագրվել է.

1. Ուսումնասիրված միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին պետական բյուջեից ֆինանսավորումը կազմել է 109,750.2 հազ. դրամ, արտաբյուջետային մուտքերը՝ 316,554.9 հազ. դրամ:

Անվճար ուսուցման համակարգում սովորողների թիվը կազմել է 771, վճարովի համակարգում՝ 3099: Ծախսերի կառուցվածքում աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները կազմել են ընդհանուր ծախսերի 55.6%-ը, սոցիալական ապահովագրության վճարները՝ 14.2%-ը, կրթաթոշակները՝ 7.4%-ը, գույք և սարքավորումների ծախսերը՝ 3.1%-ը, կոմունալ ու այլ ծախսերը՝ 19.7%-ը:

Մասնագիտական ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազան վերջին 15-20 տարվա ընթացքում չի նորացվել

Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, մասնագիտական ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազան վերջին 15-20 տարվա ընթացքում չի նորացվել, հաստատությունների մեծ մասն ունի մեկ կամ երկու համակարգիչ, իսկ ինտերնետային կապ՝ 4-ը: Նույն վիճակում է դասագրքերով ապահովությունը:

Հատուկ կրթության համակարգին պետական բյուջեից հատկացված միջոցների 60%-ն ուղղվել է աշխատանքի վարձատրությանը, 30%-ը՝ սննդամթերքի, 6.5%-ը՝ պահպանման ծախսերին:

Դպրոցների շենքերը ունեն հիմնանորոգման կարիք, լուծված չեն ջեռուցման խնդիրները, հատուկ կրթության մասնագետները կարիք ունեն նպատակային, համալիր վերապատրաստման:

Համակարգում մեծ թիվ են կազմում այն երեխաները, ովքեր կարող էին սովորել հանրակրթական դպրոցներում:

Լուծված չեն հատուկ կրթության ուսումնամեթոդական գրականության հրատարակման, հատուկ դպրոցների նյութատեխնիկական և ուսումնամեթոդական բազայի նորացման, ինչպես նաև՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար հետագա մասնագիտական կրթության մատչելիության հարցերը:

2. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման պետական պատվեր» ծրագրին 2004 թվականին պետական բյուջեից հատկացվել է 2,045,000.0 հազ. դրամ: 2004 թվականին ֆինանսավորվել է 905 թեմա, աշխատանքներին մասնակցել են 114 բուհական և գիտական հիմնարկների 5981 աշխատակիցներ: Մեկ թեմայի ֆինանսավորումը տատանվել է 350.0 հազ. դրամից մինչև 10,000.0 հազ. դրամ:

Նախարարությունում հաշվառում չի տարվում «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման պետական պատվեր» ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների՝ արտադրության մեջ ներդրման, հեղինակային իրավունքի ստացման, ներդրված ֆինանսական միջոցների արդյունավետության գնահատման ուղղությամբ:

### 2.3.5. Կապիտալ շինարարություն և նորոգումներ

Ուսումնասիրությունները կատարվել են ՀՀ քաղաքաշինության նախարարությունում, Երևանի քաղաքապետարանում, Արարատի, Վայոց ձորի, Տավուշի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի, Արագածոտնի մարզպետարաններում (պետական կառավարման մարմիններ): Համաձայն «ՀՀ 2004 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի, տարվա ընթացքում կապիտալ ծախսերի գծով ուսումնասիրվող օբյեկտներին հատկացվել է 7,202,280.3 հազ. դրամ:

Ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են՝

Առանձին դեպքերում համապատասխան շինարարության թույլտվությունը ՀՀ քաղաքաշինության նախարարության, պետական կառավարման մարմինների կողմից տրվել է զգալի ուշացումով, ինչի արդյունքում վտանգվել է պայմանագրային պարտավորությունների կատարումը, շինարարական աշխատանքների իրականացումն ու ավարտը նախանշված ժամկետներում:

- բացակայում էր մի շարք օբյեկտների շինարարության թույլտվությունը,
- մի շարք օբյեկտների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմվել են մարզպետարանների քաղաքաշինության վարչությունների կողմից՝ նախագծող ընկերությունների հետ պայմանագիր կնքելու փոխարեն,
- առանձին դեպքերում շինարարության թույլտվությունը տրվել է զգալի ուշացումով,
- բավարար ուշադրություն չի դարձվել շինարարական աշխատանքների հեղինակային և տեխնիկական հսկողությանը:

Այսպես, Շիրակի մարզում Գյումրի քաղաքի բնակելի շենքերի ինժեներական ենթակառուցվածքների և բարեկարգման աշխատանքների շինարարության թույլտվությունը տրվել է կապալի պայմանագրով աշխատանքների սկսման ժամկետից 80 օր ուշացումով, այն ժամանակ, երբ ըստ կապալի պայմանագրի աշխատանքներն արդեն ավարտված պետք է լինեին:

Որոշ պետական կառավարման մարմիններում բացակայում էր մի շարք օբյեկտների շինարարության թույլտվությունը: Քաղաքաշինության նախարարությունում բացակայում էին Արմավիրի կենտրոնական հիվանդանոցի, Երևանի թիվ 101 դպրոցի, Երևանի քաղաքապետարանում՝ թիվ 88 դպրոցի, Գեղարքունիքի

մարզպետարանում՝ Կարճաղբյուրի դպրոցի և այլ օբյեկտների շինարարության թույլտվությունը:

Պարզվել է նաև, որ նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմվել են քաղաքաշինության մարզային վարչությունների կողմից՝ նախագծող ընկերությունների հետ պայմանագիր կնքելու փոխարեն: ՀՀ Կառավարության թիվ 387-Ա և 1365-Ն որոշումներով պահուստային ֆոնդից Գեղարքունիքի մարզպետարանին հատկացված գումարների դիմաց նախագծա-նախահաշվային աշխատանքների ձեռքբերման պայմանագրեր չեն կնքվել, նախահաշվային աշխատանքներն իրականացվել են մարզպետարանի քաղաքաշինության վարչության կողմից:

Չեն կնքվել նաև հեղինակային և տեխնիկական հսկողության պայմանագրեր:

Դպրոցների հիմնանորոգման ծրագրով հատկացված գումարները նվազեցվել են շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցույթի արդյունքում առաջացած խնայողության չափով՝ առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ բացի շինարարական աշխատանքներից, պատվիրատուն հիմնանորոգման ծրագրով հատկացված գումարով պետք է ձեռք բերի նաև նախագծային, տեխնիկական և հեղինակային հսկողության աշխատանքները: Արագածոտնի մարզում Իրինդի դպրոցի հիմնանորոգմանը հատկացված

- ՀՀ 2004թ. պետական բյուջեում կատարվել է պլանի նվազեցում՝ առանց հաշվի առնելու շինարարական աշխատանքներից բացի այլ աշխատանքների կատարման անհրաժեշտությունը,
- ՀՀ 2004 պետական բյուջեում կատարված փոփոխությամբ դպրոցների շինարարական աշխատանքների ավարտման համար սահմանվել է 90-օրյա ժամկետ՝ առանց հաշվի առնելու նշված ժամկետում աշխատանքների ավարտման անհնարիությունը:

գումարը նվազեցվել է 3,010.0 հազ. դրամով՝ 600.0 հազ. դրամով ավելի, քան կազմում էր գումարի իրացման ընթացքում ստացված խնայողությունը:

ՀՀ 2004 թվականի պետական բյուջեում կատարված փոփոխությամբ, դպրոցների շինարարական աշխատանքների ավարտման համար սահմանվել է 90-օրյա ժամկետ՝ առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ խոշոր նախահաշվային արժեքով օբյեկտների շինարարությունը պարզապես հնարավոր չէ իրականացնել վերոհիշյալ ժամկետներում՝ կապված

տեխնոլոգիական պրոցեսների առանձնահատկությունների հետ: Ապարանի թիվ 3 դպրոցի շինարարական աշխատանքները, որոնց արժեքը կազմում է մոտ 200.0 մլն դրամ, նախատեսվել է ավարտել 2 ամսվա ընթացքում:

Փոփոխվող ծավալները որոշ դեպքերում գերազանցել են աշխատանքների պայմանագրային գնի 20-30%-ը:

Պետական կառավարման մարմինները շինարարական և հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով Պետական գնումների գործակալություն համապատասխան գնման բնութագրերը ներկայացրել են թերություններով: Այսպես,

*ներկայացված գնման բնութագրերում բացակայել է լոկալ ջեռուցման համակարգի ստեղծման աշխատանքների համար անհրաժեշտ էներգետիկ լիցենզիայի պահանջը:*

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում պետական կառավարման մարմինների ենթակայության մի շարք օբյեկտներում առաջացել է ծավալաթերթով առկա աշխատանքային ծավալների փոփոխման անհրաժեշտություն՝ հիմնականում պայմանավորված նախագծային թերություններով:

- Չեն պահպանվել շինարարական աշխատանքների իրականացման պայմանագրային ժամկետները,
- Խախտվել են պայմանագրային պարտավորությունները

Արձանագրվել է փոփոխվող ծավալների հատկապես բարձր տոկոս, մասնավորապես Գյումրի քաղաքում բարեկարգման աշխատանքների ժամանակ, որը գերազանցել է պայմանագրի գնի 30%-ը: Արդյունքում՝ մրցույթի դրված աշխատանքների փոխարեն իրականացվել են այլ բնույթի և այլ

ծավալի աշխատանքներ:

Չեն պահպանվել շինարարական աշխատանքների իրականացման պայմանագրային ժամկետները, որի արդյունքում տեղի է ունեցել պայմանագրային պարտավորությունների խախտում, կապալի պայմանագրով նախատեսվածի փոխարեն հիմնանորոգման աշխատանքներն ավարտվել են 60 – 90 օր ուշացումով:

### Առաջարկություններ

#### ՀՀ Կառավարությանը՝

- Կապիտալ շինարարության և հիմնանորոգման աշխատանքների նպատակով պետական բյուջեում միջոցներ նախատեսել՝ ելնելով օբյեկտի նախագծանախահաշվային փաստաթղթերի՝ փորձաքննությամբ հաստատված նախահաշվային արժեքից:
- Կատարել փոփոխություններ «Գնումների բնութագրերի հաստատման, նախնական հսկողության և ֆինանսավորման կարգում»՝ պատվիրատուի կողմից աշխատանքների առանձին փուլերի և ծավալների հանձնման-ընդունման կամ պատճառաբանված մերժման համար սահմանելով առավել սեղմ ժամկետ:

#### ՀՀ քաղաքաշինության նախարարությանը՝

- Սահմանել նախագծանախահաշվային աշխատանքների կատարման դիմաց վճարումների հստակ նորմատիվներ և կանոնակարգել դրանց կատարման կապալի պայմանագրերի կնքումը:
- Վերանայել նախագծանախահաշվային աշխատանքների կատարման ժամանակ կիրառվող նորմատիվային համակարգը:
- Ստեղծել շինարարական աշխատանքներով զբաղվող կազմակերպությունների տվյալների բազա՝ այսուհետ բացառելու ոչ բարեխիղճ կազմակերպությունների մասնակցությունը պետական ծրագրերի իրականացմանը:

#### ՀՀ քաղաքաշինության նախարարությանը և մարզպետարաններին՝

- Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ նախագծանախահաշվային փաստաթղթերով չնախատեսված զգալի շինարարական ծավալների ի հայտ գալու դեպքում նախագծային աշխատանքներն իրականացրած կազմակերպությունների նկատմամբ նախատեսել պատասխանատվության համապատասխան միջոցներ:
- Շինարարական աշխատանքների որակը բարձրացնելու նպատակով պատշաճ ուշադրություն դարձնել դրանց տեխնիկական և հեղինակային հսկողությանը:

### 2.3.6. Մյունիքի մարզպետարան

Ուսումնասիրվել է մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցների վարձատրման և պարգևատրման համապատասխանությունը «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքին: Տարվա ընթացքում մարզպետարանի աշխատակիցներին տրվել է պարգևատրում, լրացուցիչ միանվագ արձակուրդային վճարներ և դրամական օգնություն՝ 17,516.9 հազ. դրամի, որից՝ 281.0 հազ. դրամը վճարվել է սահմանվածից ավելի, խախտելով օրենքի պահանջները:

Մարզի 24 դպրոցների հիմնանորոգումները իրականացնելու նպատակով մարզպետարանը մրցույթով 11 կապալառու կազմակերպությունների հետ կնքել է 14 պայմանագիր: «Գուրոս» ՍՊԸ-ի հետ կնքվել են պայմանագրեր՝ Շինուհայր և Քարաշեն համայնքների դպրոցների հիմնանորոգման համար՝ 34,510.0 հազ. դրամ և Գորիս քաղաքի թիվ 3 դպրոցի հիմնանորոգման համար՝ 42,500.0 հազ. դրամ արժեքով: Շինուհայր համայնքի դպրոցի՝ 24,735.0 հազ. դրամի և Քարաշեն համայնքի դպրոցի 9,775.0 հազ. դրամի հիմնանորոգման 3-ական կատարողական ակտերով չի հաշվարկվել ավելացված արժեքի հարկը:

Մարզպետարանում ներքին աուդիտի համակարգի բացակայությունը, որը «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջի խախտում է, հանգեցրել է մարզպետարանի կողմից ՊՈԱԿ-ներին տրամադրված միջոցների նկատմամբ ոչ պատշաճ ընթացիկ հսկողության: Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է. հաշվի ստորադաս կարգադրիչների (ՊՈԱԿ) հաշվարկային հաշիվներում (ոչ առևտրային գործունեության արդյունքում) առկա են տարեսկզբի ազատ մնացորդներ, որոնք չեն արտահայտվել ֆինանսական հաշվետվություններում: Առանց նախահաշվի

վերահաստատման, կատարվել են ներքին հողվածային վերաբաշխումներ, և ՊՈԱԿ-ները ստանձնել են տվյալ ֆինանսական տարում վճարման ենթակա պայմանագրային պարտավորություններ:

ՀՀ Կառավարության 27.05.2004 թ. N 907-Ն որոշումով կատարվել է վերաբաշխում բյուջետային ծրագրերի միջև և «11.07.02. Հակաստղանքային միջոցառումներ» ծրագրով մարզպետարանին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 9,890.0 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորվել է 9,790.0 հազ. դրամ: Քարահունջ գյուղի ինժեներատեխնիկական հետազոտության և ռեժիմային դիտարկումների համար մարզպետարանը «Գեոռիսկ» ՓԲԸ-ի հետ կնքել է 29.11.2004 թ. N ՀՀ ՍՄ ԳԱՇՁԲ-10 պայմանագիրը՝ 8,300.0 հազ. դրամ արժեքով: «Գեոռիսկ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է գյուղի ինժեներատեխնիկական հետազոտությունների վերաբերյալ եզրակացություն-հաշվետվությունը, բացակայում է գումարի ծախսման վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունը:

«14.06.05. Սյունիքի մարզի զարգացման ծրագրով» մարզպետարանին ՀՀ 2005 թ. պետական բյուջեից նախատեսվել է 1,500,150.0 հազ. դրամ՝ «Կապիտալ շինարարության ծախսեր» հոդվածով: ՀՀ Կառավարության՝ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2005 թվականի զարգացման ծրագիրը հաստատելու մասին» 17.02.2005 թ. N 225-Ն որոշմամբ հաստատվել է 2005 թ. ընթացքում իրականացվող աշխատանքները: Հիմք ընդունելով վերոհիշյալ որոշումը, մարզպետարանը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համաձայնությամբ կատարել է ներքին հողվածային վերաբաշխում՝ «Կապիտալ շինարարության ծախսեր» հոդվածից պակասեցրել է 1,020,150.0 հազ. դրամ (ծրագրով նախատեսված ընդհանուր գումարի 68.0%-ը) և վերաբաշխել այլ հոդվածների, այդ թվում՝ «Ընթացիկ ներքին այլ տրանսֆերտային վճարներ»՝ 165,200.0 հազ. դրամ, «Կապիտալ նորոգումների ծախսեր»՝ 850,800.0 հազ. դրամ, «Կապիտալ ներքին տրանսֆերտներ»՝ 4,150.0 հազ. դրամ: Խախտվել է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը՝ գերազանցվել է ծրագրով սահմանված հատկացումների ընդհանուր գումարի ներքին վերաբաշխումների թույլատրելի 15% չափաքանակը:

### Առաջարկություն

#### ՀՀ Կառավարությանը՝

Բյուջետային ծրագրերի իրականացման ընթացքում սահմանել պատշաճ հսկողություն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով նախատեսված ներքին հողվածային վերաբաշխումների թույլատրելի չափաքանակը չգերազանցելու նկատմամբ

ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի 2003 թ. Սյունիքի մարզում իրականացված վերահսկողության մասին հաշվետվությունում արձանագրվել էր, որ 2001-2002 թթ. մարզպետարանին ՀՀ պետական բյուջեից հատկացվել էր 60,000.0 հազ. դրամ՝ Սիսիան քաղաքի Գայի թիվ 7՝ առավել վտանգված, քանդման ենթակա վթարային շենքում

բնակվող ընտանիքների անվտանգության ապահովման համար բնակարաններ գնելու և վերաբնակեցնելու նպատակով: Արձանագրվել էր, որ բնակիչների մեծամասնությունը շարունակում է բնակվել վթարային շենքում: Ներկայումս 50 բնակարանոց վթարային շենքում հաշվառված վերաբնակեցման ենթակա 52 ընտանիքից 40 ընտանիքի համար գնվել է բնակարան՝ 48,781.8 հազ. դրամ ընդհանուր արժեքով (2002 թ. բյուջետային տարվա ավարտին 11,218.2 հազ. դրամը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե): Մնացած 12 ընտանիքներից 3-ը բացակայում են հանրապետությունից, իսկ 9-ը՝ հրաժարվել են բնակարան գնել: 2005 թ. վերահսկողության ժամանակահատվածում վերաբնակեցման ծրագիրն իրականացվել է մասնակի՝

Միսիանի քաղաքապետարանի տնօրինմանը բնակարաններ չեն հանձնվել, բնակիչները շարունակում են բնակվել վթարային շենքում:

## 2.4. Պետական գույքի մասնավորեցման մասին

### 2.4.1. Պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թթ. ծրագրի կատարման մասին ՀՀ Կառավարության 2004 թ. տարեկան հաշվետվության վերաբերյալ

Վերահսկիչ պալատն իրավասու է վերահսկողություն իրականացնել պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և սպասարկման համար ծրագրի կատարման նկատմամբ

#### Օրենքի 5-րդ հոդված

Համաձայն Մասնավորեցման Օրենքի 4-րդ հոդվածի՝ «Եթե ծրագրի գործողության ժամկետը լրանալուց հետո նոր ծրագիր չի ընդունվում, ապա շարունակում է գործել նախորդ ծրագիրը»: Մասնավորեցման նոր ծրագիր 2004 թ. չի ընդունվել (ՀՀ Կառավարության կողմից նախագիծ չի ներկայացվել) և ՀՀ Կառավարության կողմից ներկայացվել է պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թթ. ծրագրի կատարման (*այսուհետ՝*

*Ծրագիր*) 2004 թ. տարեկան հաշվետվությունը (*այսուհետ՝ Հաշվետվություն*):

2004 թվականի հունվարի 1-ից մինչև 2004 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանում (*այսուհետ՝ հաշվետու ժամանակաշրջան*) ընկերությունների գերակշիռ մասը (70.6%-ը) մասնավորեցվել է ուղղակի վաճառքի ձևով, իսկ ՀՀ Կառավարության 2004 թ. բյուջետային ուղերձով ամրագրվել էր, որ

ՀՀ Կառավարության 2004 թ. բյուջետային ուղերձով ամրագրվել էր, որ մասնավորեցման ձևերից նախապատվությունը կտրվի մրցույթին, մինչդեռ 2004 թ. ընթացքում պետական գույքի գերակշիռ մասը մասնավորեցվել է ուղղակի վաճառքի ձևով

«Պետական գույքի մասնավորեցման ձևերից նախապատվությունը կտրվի մրցույթին, ինչը կմիջնորդավորվի ներկայացվող ներդրումային ծրագրերի արժանահավատության և հիմնավորվածության գնահատման արդյունքներով»:

31.12.2004 թ. դրությամբ ենթակա են մասնավորեցման կամ լուծարման 230 ընկերություն և պետական գույք կամ Ծրագրի ցանկում ընդգրկվածների 23%-ը: Արդյունքում կարելի է արձանագրել, որ երեք տարվա համար նախատեսված Ծրագիրը չորս տարվա ընթացքում (01.01.2005 թ. դրությամբ) կատարվել է ընդամենը 77%-ով:

Ծրագրի ցանկում ընդգրկված մասնավորեցված ընկերությունների և պետական գույքի քանակային ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ըստ տարեթվերի և մասնավորեցման ձևերի ներկայացված է աղյուսակ 8-ում:

Շարունակվել է այն գնային քաղաքականությունը, որով պետական գույքի վաճառքի գները ՀՀ Կառավարության որոշումներով հիմնականում սահմանվել են դրանց գնահատված արժեքի 25%-ի չափով, իսկ առանձին դեպքերում՝ ավելի պակաս: Օրինակ՝ «Սպիտակի վերելակաշինական գործարան» ԲԲԸ-ի մասնավորեցման ենթակա բաժնետոմսերի վաճառքի գինը կազմել է գնահատված արժեքի ընդամենը 5%-ը:

Հաշվետու ժամանակաշրջանում ուղղակի վաճառքի ձևով և մրցույթով մասնավորեցված ընկերությունների վաճառքի գները կազմել է գնահատված արժեքի 25,7%-ը:

Մասնավորեցման ձևը	2001-2003 թթ. ընթացքում		2004 թ. ընթացքում	
	քանակ	%	քանակ	%
Ուղղակի վաճառք	170	62.5	48	70.6
Մրցույթ	51	18.7	14	20.6
Աճուրդ	19	7.0	6	8.8
Պետ բաժնեմասի ազատ բաժանորդագրություն	23	8.5	-	-
Այլ գործարքներ <sup>1</sup>	9	3.3	-	-
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>272</b>	<b>100</b>	<b>68</b>	<b>100</b>

Հաշվետու ժամանակաշրջանում ներդրումային ու սոցիալական երաշխիքների մասով պարտավորությունների կատարման ժամկետները լրացող 136 ընկերությունների և պետական գույքի գնորդներից այդ պարտավորությունները կատարել են 96-ը (70.6%-ը): Դրանցից 16-ը (11.8%-ը) պայմանագրով հաշվետու ժամանակաշրջանում կատարվող ներդրումային պարտավորությունները կատարել են դեռևս 2002-2003 թթ.: Ստանձնած պարտավորությունները չեն կատարել 14 ընկերությունների և պետական գույքի գնորդներ, որոնց կատարելիք ներդրումների ընդհանուր գումարը կազմում է 1,085.2 մլն դրամ և 15,056.0 հազ. ԱՄՆ դոլար, իսկ սոցիալական երաշխիքների մասով պետք է ստեղծվեր մոտ 3400 աշխատատեղ:


2001-2004 թթ. ժամանակահատվածում լուծարման գործընթացում գտնվել կամ սնանկացման է ներկայացվել Ծրագրի ցանկում ընդգրկված 399 ընկերություն, որը կազմում է Ծրագրի ցանկի ընկերությունների 39.9%-ը: Ծրագրի գործողության ժամանակահատվածի համար Ծրագրի ցանկում ընդգրկված ընկերությունների վերաբերյալ ամփոփ տվյալները ներկայացված է գծապատկեր 3-ում:

Ըստ ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տվյալների պետական գույքի մասնավորեցումից ստացված միջոցները 01.01.2005 թ. դրությամբ կազմել է 142,032.8 մլն դրամ և 45 մլն ԱՄՆ դոլար:

Տարածամեծ վճարումների մնացած մասի վճարման արտոնություններից օգտվել են 1152 մասնավորեցման սուբյեկտ, որի արդյունքում ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է 1,753.8 մլն դրամ, իսկ հաշվարկված ընդհանուր զեղչված գումարը կազմել է 8,059.1 մլն դրամ կամ այդ սուբյեկտների կողմից վճարկման ենթակա հաշվարկված գումարը զեղչվել է շուրջ 82.1 %-ով:

Հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցման գործընթացին զուգահեռ իրականացվել են մաս Ծրագրի ցանկում չընդգրկված և Ծրագրով չնախատեսված պետության սեփականություն հանդիսացող գույքի օտարման գործարքներ: Հաշվետվությունում այդ գործարքների վերաբերյալ տվյալները ներկայացված են միայն օտարված գույքի գնորդների ստանձնած ներդրումային պարտավորությունների մասով:

<sup>1</sup> ՀՀ Կառավարության և ՌԴ կառավարության միջև 15.11.2002 թվականին կնքված միջպետական համաձայնագրի («գույք՝ պարտքի դիմաց») պահանջներին համապատասխան Ծրագրում ընդգրկված թվով չորս ընկերություններ փոխանցվել են Ռուսաստանի Դաշնությանը: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է մաս «Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայան» ՊԲԲԸ (ծածկագիր՝ 62338) պետությանը պատկանող օգտագործման իրավունքի փոխանցումը կոնցեսիայի պայմանագրով: Թվով չորսը՝ էլեկտրաէներգիա բաշխող ընկերություններն են:



**2.4.2. Գիտաարտադրական, գիտահետազոտական և նախագծային աշխատանքներով զբաղվող պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների մասնավորեցման գործընթացի մասին**

Գիտաարտադրական ընկերությունների կողմից մասնավորեցման նպատակով ներկայացվող ելակետային տվյալներում շատ դեպքերում չի արտացոլվել ոչ նյութական ակտիվների կազմի կարևորագույն և որոշիչ խմբի՝ մտավոր սեփականության մասին տեղեկատվությունը

2001-2003 թթ. Ծրագրի ցանկում ընդգրկված 62 գիտաարտադրական, գիտահետազոտական և նախագծային աշխատանքներով զբաղվող պետական բաժնեմաս ունեցող ընկերություններից մասնավորեցվել են 44-ը, լուծարվել, սնանկ են ճանաչվել կամ գտնվում են լուծարման, սնանկացման գործընթացում

7-ը, միջպետական համաձայնագրով «գույք՝ պարտքի դիմաց» հանձնվել են Ռուսաստանի Դաշնությանը 3-ը, իսկ 8-ը՝ դեռևս չեն մասնավորեցվել:

**Առաջարկություն**

**ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը՝**

Իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ գիտաարտադրական, գիտահետազոտական և նախագծային աշխատանքներով զբաղվող ընկերությունների ոչ նյութական ակտիվների հաշվառման, ընկերությունների հաշվեկշիռներում արտացոլման, մտավոր սեփականության օբյեկտների համարժեք գնահատման և մասնավորեցվող ընկերությունների արժեքում դրանց ներառման նպատակով

Մասնավորեցման հիմնական ձևը հանդիսացել է ուղղակի վաճառքը, որով մասնավորեցվել են 37 (84.1%) ընկերություն, 5-ը մասնավորեցվել են մրցույթով, իսկ 2-ը՝ դասական աճուրդով: *Դրանց պետական բաժնեմասի գնահատված արժեքը կազմել է 5,850,547.0 հազ. դրամ, վաճառքի գինը՝ 950,897.0 հազ. դրամ կամ գնահատվածի 16.3%-ը: Պետական բաժնեմասի վաճառքը գնահատված արժեքի նկատմամբ նվազագույն հարաբերակցությամբ իրականացվել է «Օրբիտա» ՓԲԸ մասնավորեցման դեպքում, որի գնահատված*

*արժեքը կազմել է 3,212.0 մլն դրամ, վաճառքի գինը՝ 116.7 մլն դրամ կամ գնահատվածի 3.6%-ը:*



Գիտաարտադրական, գիտահետազոտական և նախագծային աշխատանքներով զբաղվող ընկերությունների գնորդներից ներդրումային և սոցիալական երաշխիքների մասով պայմանագրային պարտավորություններ են ստանձնել 24-ը կամ մասնավորեցվածների 54.5%, այսինքն՝ շատ դեպքերում մասնավորեցումն իրականացվել է առանց վերոհիշյալ պայմանների: Ներդրումային և սոցիալական երաշխիքների մասով պարտավորություններ ստանձնած ընկերությունների գնորդների կողմից կատարվելիք ներդրումների ընդհանուր գումարը կազմում է 1,287.5 մլն դրամ, 2.9 մլն ԱՄՆ դոլար և 50.0 մլն ՌԴ ռուբլի, ինչպես նաև պետք է ստեղծվի մոտ 1900 աշխատատեղ:

Պայմանագրերով սահմանված ժամկետներում իրենց պարտավորությունները կատարել են 9 ընկերությունների գնորդներ, մեկ ընկերության գնորդ ստանձնած ներդրումները կատարել է ուշացումով: Թվով 11 ընկերությունների պարտավորությունների կատարման ժամկետները դեռևս չեն լրացել: Պայմանագրային պարտավորությունները մասամբ են կատարել 2 ընկերության գնորդներ, իսկ մեկ ընկերության պարտավորությունները պատշաճ չկատարելու հետևանքով ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը ՀՀ տնտեսական դատարանի կողմից մերժված հայցի դեմ վճարել է բողոք բերելու խնդրանքով դիմել է ՀՀ դատախազություն:

Ընկերությունների ոչ նյութական ակտիվների հաշվառման, արժեվորման և դրա հետևանքով հաշվապահական ձևակերպման բացակայության պատճառով միայն առանձին դեպքերում են հաշվառվել և գնահատվել մտավոր սեփականության արժեքները, իսկ մասնավորեցման նպատակով կիրառվող գնահատման կարգերը, ըստ էության, չեն արտացոլում դրանց իրական արժեքը:

ՀՀ կառավարության մի շարք որոշումներով սահմանվել են ընկերություններում առկա պետական կարևորություն ունեցող տեխնիկական և նախագծանախահաշվարկային փաստաթղթերի պահպանման և համապատասխան պետական մարմիններին հանձնման մասին դրույթներ, սակայն այդ փաստաթղթերի հաշվառման, դասակարգման, դրանց կարևորության աստիճանի որոշման և հանձնման վերաբերյալ համապատասխան աշխատանքներ որոշ դեպքերում չեն կատարվել:

*ՀՀ Կառավարության կողմից ընդունված համապատասխան որոշումներով ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը հանձնված նախագծային ինստիտուտների շենքերի օտարված տարածքների վաճառքի գները տարբերվում են Երևան քաղաքում ձևավորված անշարժ գույքի շուկայական գներից, իսկ որոշ դեպքերում մի շարք խախտումներ և թերություններ են արձանագրվել ընկերությունների մասնավորեցման գործընթացում:* Օրինակ՝ «Ատոմ» գիտաարտադրական» ՓԲԸ մասնավորեցման նպատակով ընկերության գնահատման համար պահանջվող ելակետային որոշ տվյալներ հավաստի չեն կամ չեն ներկայացվել: Մասնավորապես շինությունների համար առանձին հաշվառում չի տարվել և դրանք հաշվառվել են ընկերության լաբորատոր շենքի արժեքում: Տրամադրվել է տեղեկանք՝ կատարված գույքագրման վերաբերյալ, սակայն փաստացի այն չի կատարվել, իսկ 2004 թ. առաջին եռամսյակում ընկերության հաշվեկշռում արտացոլված 290 միավոր հիմնական միջոցներից 285 միավորը դուրս է գրվել առանց հիմնավորող փաստաթղթերի: Ոչ նյութական ակտիվների գումարը նվազեցվել է և ձևակերպվել որպես վնաս, որի պատճառով մասնավորեցման նպատակով ընկերության գնահատված մեծությունը 18.0 մլն դրամով պակասել է:

**2.4.3 Պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների սնանկացման, լուծարման եւ գույքի օտարման արդյունքում պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կատարման մասին**

Լուծարվել, սնանկ են ճանաչվել կամ լուծարման, սնանկացման գործընթացում են գտնվում պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թվականների ծրագրի ցանկում ընդգրկված ընկերությունների շուրջ 40%-ը

Պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների լուծարման գործընթացն իրականացնող հանձնաժողովների (*այսուհետ՝ Հանձնաժողովներ*) կողմից ՀՀ Կառավարության որոշումներով լուծարվող մի շարք ընկերությունների («Հայկոնտրակտ» ՊԶ-ի

«Ագրոհամալիր» ԴԶ, «Գյումրի էլեկտրոն» ԴԶ, «Կապանի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ, «Ուտիք» ՓԲԸ, «Վանաձոր հյուրանոց» ՓԲԸ և այլն) կրեդիտորական պարտավորությունները մարելու ուղղությամբ իրականացվող միջոցառումների ընթացքում դատական ակտերի հարկադիր կատարման (*այսուհետ՝*

Բռնագանձման, լուծարման և սնանկացման գործառնություններով իրականացվող գույքի վաճառքից գոյացած ԱԱՀ գումարները պետական բյուջե արտահերթ վճարելու համար անհրաժեշտ է կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ:

Ձեռնարկել միջոցառումներ՝ սնանկ ճանաչված ընկերությունների վերաբերյալ համապատասխան ֆինանսատնտեսական ցուցանիշների հաշվառման և դասակարգման աշխատանքների իրականացման ուղղությամբ:

*ԴԱՀԿ*) ծառայությունը բռնագանձում է իրականացնում, և համաձայն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44 հոդվածի, պարտապահին՝ ՀՀ Կառավարության կողմից ստեղծված լուծարային Հանձնաժողովին արգելվում է գույքը տնօրինել: Որոշ դեպքերում էլ, մինչև ՀՀ Կառավարության կողմից լուծարման մասին որոշում ընդունելը, ԴԱՀԿ-ի կողմից գույքի բռնագանձման կատարողական վարույթ է սկսվում,

որի ժամանակ նույնպես արգելվում է բռնագանձվող գույքի տնօրինումը և արդյունքում՝ Հանձնաժողովի կողմից լուծարման աշխատանքները հնարավոր չի լինում լիարժեք կատարել:

Բռնագանձված գույքի վաճառքից ավելանում է ընկերության կողմից պետբյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի (*այսուհետ՝ ԱԱՀ*) մարման պարտավորությունների գումարը, որը կատարելու հնարավորությունները սահմանափակ են, քանի որ օրենսդրությամբ չորրորդ հերթին նախատեսված պետական բյուջեի պարտքի մարման համար ընկերության ֆինանսական միջոցները շատ դեպքերում չեն բավարարում:

Սնանկ ճանաչված ընկերությունների վերաբերյալ քանակական և գումարային ֆինանսատնտեսական ցուցանիշների՝ վաճառված գույքի արժեքի, պարտատերերի, այդ թվում՝ բյուջեի նկատմամբ պարտքի և դրա մարման մասին ՀՀ տնտեսական դատարանի կողմից համապատասխան տեղեկատվություն չտրամադրելու հետևանքով, որի պատճառը, ըստ ՀՀ տնտեսական դատարանի 28.12.2005թ. թիվ Ս-7109/1 գրության իրենց տեղեկատվական բազայում պահանջվող տեղեկատվության դասակարգման բացակայությունն է, հնարավոր չի եղել իրականացնել ուսումնասիրություն՝ սնանկ ճանաչված պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների գույքի օտարման արդյունքում պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կատարման վերաբերյալ:

Ծրագրում ընդգրկված և ՀՀ Կառավարության որոշումներով լուծարման ներկայացված մի շարք ընկերությունների («Սոճուտ» մանկական առողջարան, «Արթիկի ԲՈՒՄՏ» ՓԲԸ, Կապանի «Էլեկտրոն» ԲԲԸ և այլն) լուծարման աշխատանքների ընթացքում պարտատերերի կողմից հայցադիմումներ են ներկայացվել դատարաններ՝ լուծարվող ընկերությունը սնանկ ճանաչելու պահանջով, իսկ սնանկ ճանաչելու մասին վճիռն ուժի մեջ մտնելու պահից դադարում է Հանձնաժողովի լիազորությունները և

պարտապանի ողջ գույքը, հաշվապահական և այլ փաստաթղթերը հանձնվում է սնանկության գործով կառավարիչին:

**2.4.4 Անտառային, ջրային հողերում հողահատկացման, անշարժ գույքի օգտագործման մասին**

Ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել են որոշ անհամապատասխանություններ՝ անտառային հողերի օգտագործման գործընթացը կարգավորող գործող օրենսդրությունում:

Հստակեցված և տարանջատված չեն պետական սեփականություն հանդիսացող անտառային հողերի և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի սահմանները

Մասնավորապես, հողի հարկի մասով՝ «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 10-րդ հոդվածներում, օգտագործման ժամկետների մասով՝ ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ և ՀՀ անտառային օրենսգրքի 17-րդ հոդվածներում, անտառօգտագործման վճարների մասով՝

ՀՀ անտառային օրենսգրքի 16-րդ և 51-րդ հոդվածներում:

Հնարավոր չէ լիարժեք պատկեր կազմել անտառային և ջրային հողերի չափերի վերաբերյալ, քանի որ վերջին հողային հաշվեկշիռը օրենքի տեսքով ընդունվել է դեռ 1997 թ. հունվարի 1-ի դրությամբ, իսկ նոր հողային հաշվեկշիռ ՀՀ Կառավարության կողմից չի հաստատվել:

Ըստ անտառաշինական նախագծերի, անտառային հողերի տարածքների որոշ հատվածներ շատ

Պատշաճ չեն իրականացվում անտառտնտեսությունների կողմից անտառային հողերի վարձակալության տրամադրման, վարձավճարների հավաքման աշխատանքները

դեպքերում համընկնում են համայնքների հողերի հատակագծերում նշված հողատարածքներին: Հստակ տարանջատված չեն պետական սեփականություն հանդիսացող անտառային հողերի և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի սահմանները, որի

արդյունքում վերոհիշյալ տարածքների օգտագործման տրամադրման պայմանագրերի կնքումը և վարձավճարների հավաքագրումը իրականացվում են մի կողմից «Հայանտառ»-ի, իսկ հիմնականում՝ համայնքի կողմից: Մասնավորապես, բազմաթիվ են նման դեպքերը Աղվերանում, Հանքավանում և

Բյուրականում տեղակայված պանսիոնատներին, առողջարաններին և հանգստյան տներին վարձակալության տրամադրված հողամասերում:

Առանձին դեպքերում անտառային հողերում տարածքներ են օգտագործվել առանց վարձակալության պայմանագրերի, իսկ կնքված պայմանագրերը հիմնականում օրենսդրությամբ սահմանված կարգով նոտարի կողմից չեն վավերացվել և պետական գրանցում չեն ստացել: ՀՀ անտառային ֆոնդի հողերի հողահատկացման և

**Առաջարկություն**  
**ՀՀ Կառավարությանը՝**  
ՀՀ Կառավարության որոշումներով անտառային հողերի փոխադրումը այլ կատեգորիաների իրականացնել հանձնման ենթակա տարածքների մանրամասն ուսումնասիրության և համապատասխան մարմինների կողմից կազմված հանձնման-ընդունման ակտի հիման վրա, ինչպես նաև անհրաժեշտ է հնարավորինս շուտ կատարել անտառային հողերի սահմանների ճշտումները, կազմել նոր անտառաշինական նախագծեր և հստակեցնել հողերի պատկանելիության հարցը

քաղաքաշինական գործունեության գործընթացի

իրականացման ընթացքում անտառտնտեսությունների կողմից խախտվել են ՀՀ Կառավարության 08.05.2003 թ. թիվ 613-Ն որոշման պահանջները՝ մասնավորապես հողամասեր են տրամադրվել

վարձակալության առանց մրցույթի, ինչպես նաև առանց վարչական տարածքի ղեկավարի համաձայնության:

Ըստ ՀՀ անտառային օրենսգրքի 32-րդ հոդվածի՝ կողմնակի անտառօգտագործման համար հատկացված տարածքներում արգելվում է կապիտալ շինությունների կառուցումը, սակայն Եղեգիսի անտառտնտեսության անտառային ֆոնդի հողերում կապիտալ շինարարության աշխատանքներ են կատարվել:

Ըստ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի. «Արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք՝... պետական մելիորատիվ համակարգերի կամ ջրային ֆոնդի կազմի մեջ մտնող ջրային օբյեկտների հողեր են, որոնց ցանկը սահմանում է կառավարությունը», ինչպես նաև ջրանցքների, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հողերը: Սակայն կառավարության կողմից վերոհիշյալ ցանկը չի սահմանվել և դրա բացակայության պարագայում, ըստ էության, հնարավոր է կարևորագույն նշանակություն ունեցող ջրային օբյեկտների հողամասերի օտարումը:

Համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի, ՀՀ Կառավարության 20.01.2005 թ. թիվ 64 որոշմամբ հաստատվել են ջրակոնսերվացիայի պահպանման գոտիների տարածքները, որից հետո երեք ամսվա ընթացքում պետք է հաստատվեր այդ գոտիներում հողերի տրամադրման և օգտագործման կարգը,

Բացթողումներ են արձանագրվել ջրային հողերի օգտագործման հարաբերությունները կարգավորող օրենսդրության պահանջների կատարման գործընթացում

որը նույնպես չի կատարվել: Արդյունքում, ջրային ֆոնդի կազմի մեջ մտնող ջրային օբյեկտների և հողերի ինքնակամ զավթման, դրանց օտարման, ոչ նպատակային հատկացումների և այդ հողատարածքներում օրենսդրության պահանջների խախտումներով իրականացված շինարարությունը, ինքնակամ

շինությունները բազմաթիվ են: Շատ են նաև ՀՀ ջրօգտագործողների ընկերությունների (*այսինքն՝ ՋՕԸ*) սպասարկման տակ գտնվող ջրատնտեսական համակարգերի՝ ջրային ֆոնդի հողերում հողամասերի անօրինական օգտագործման դեպքերը:

Ջրային հողերի օգտագործման ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ձկնաբուծության ոլորտի զարգացման համար բավական լուրջ խոչընդոտ է հանդիսանում հողերի կատեգորիաների փոփոխման հետ կապված խնդիրների լուծման ընթացքը: Ըստ ՀՀ հողային օրենսգրքի 26-րդ հոդվածի, «ձկնաբուծությամբ կարելի է զբաղվել ջրային հողերում», սակայն ձկնաբուծության նպատակով հիմնականում օգտագործվում են արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական, ինչպես նաև՝ գյուղատնտեսական նշանակության հողերը:

Մի շարք գյուղական համայնքներում կառուցվել են ինքնակամ ձկնաբուծական ջրավազաններ և օժանդակ շինություններ, չեն կնքվել հողի վարձակալության պայմանագրեր և չեն մուծվել հողի վարձավճարներ

ՀՀ Կառավարության կողմից հաստատված գյուղական համայնքների վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքներին փոխանցելու մասին որոշումներում գյուղական համայնքների հողերի կատեգորիաները որոշ դեպքերում չեն համապատասխանում

այդ հողերի փաստացի օգտագործման նպատակային նշանակությանը:

ՀՀ Արմավիրի մարզի Գրիբոյեդով, Ակնաշեն, Լուսազյուղ, Արաքս, Ապագա, ինչպես նաև Արարատի մարզի Հովտաշատ, Նորամարգ և Մարմարաշեն գյուղական համայնքներում հողերի հատկացումը և դրանց օգտագործումը առանձին դեպքերում իրականացվել է առանց համապատասխան փաստաթղթային ձևակերպման, մասնավորապես ոչ ջրային հողերն առանց կատեգորիայի փոփոխության օգտագործվել են ձկնաբուծության նպատակով: Գրիբոյեդով գյուղական համայնքում «Արոր-Բագրատ» ՍՊ ընկերության, «Էջմիածնի առևտրագնման բազայի» և Էջմիածնի սեփականաշնորհված նախկին ջրային տնտեսության, իսկ Ակնաշեն գյուղական համայնքում տարբեր ֆիզիկական անձանց կողմից ինքնակամ կառուցվել են ձկնաբուծական ջրավազաններ և օժանդակ շինություններ, չեն կնքվել հողի վարձակալության պայմանագրեր և չեն մուծվել հողի վարձավճարներ: Արաքս և Ապագա գյուղական համայնքների ջրային ֆոնդի հողերում առանց համապատասխան փաստաթղթերի ձևակերպման շահագործվում են ավազի հանքեր:

Հովտաշատ գյուղական համայնքում ֆիզիկական անձանց կողմից տարիներ առաջ զավթվել և օգտագործվել են պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության ավելի

**Առաջարկություն**  
**ՀՀ Կառավարությանը՝**  
Օրենսդրորեն ընդլայնել ձկնաբուծության նպատակով օգտագործվող հողերի կատեգորիաների շրջանակը կամ պարզեցնել և հստակեցնել հողերի կատեգորիաների փոփոխության գործընթացը

քան 4.0 հա հողեր, որտեղ ինքնակամ կառուցվել են շինություններ /ավելի քան 12 հառ ձկնաբուծական լճեր/, սակայն համապատասխան մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով կանխարգելող և կասեցնող միջոցառումներ չեն ձեռնարկվել: Հետագայում՝ 26.08.2003 թ. հիմք

ընդունելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը, համայնքի ղեկավարը կայացրել է պետական սեփականություն հանդիսացող հողամասերում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու մասին որոշումներ:

Նորամարգ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության հողերում /ՀՀ Կառավարության 16.10.2003 թ. թիվ 1327 որոշում/ 1,1 հա և արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 1.54 հա տարածքները համապատասխանաբար «Էներգիա» ՍՊԸ և «Երևանի շամպայն գինիների գործարան» ԲԲԸ կողմից օգտագործվում են ձկնաբուծության նպատակով: Տվյալ պահին հողամասերի կատեգորիան ջրային չէ և օրենսդրությամբ սահմանված կարգով չի փոփոխվել, այսինքն՝ խախտվել է հողի օգտագործման նպատակային նշանակությունը:

ՋՕԸ-ի սպասարկման տակ գտնվող ջրատնտեսական համակարգերի ջրային ֆոնդի հողերում «Մուսալեռ» ՋՕԸ-ի՝ Էջմիածնի և Մուսալեռի ջրանցքների վրա կառուցվել է կամուրջ, շինություն, պարիսպ, խաղատուն, գրավատուն և այլ շինություններ, «Արարատ» ՋՕԸ-ի Երասխի ջրանցքի վրա՝ 8000 քմ տարածքում կառուցվել է ձկնային ավազան, իսկ Ավշար գյուղական համայնքում «Ավշար-Այգավան» ջրհան կայանի 4.0 հա տարածքը /մղման խողովակաշարարերով/ սեփականաշնորհվել է:

**2.5. Համայնքներին պետական բյուջեից հատկացումների օրենսդրությանը համապատասխանության և բյուջետային միջոցների օգտագործման մասին**

**2.5.1. Համայնքներին հատկացված միջոցների համապատասխանությունը ՀՀ օրենքներին**

2005թ. պետական բյուջեից համայնքների բյուջեներին հատկացվել է 15,844,081.8 հազ. դրամ


**Առաջարկություն**  
**ՀՀ Կառավարությանը**  
 Մշակել ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների հաշվարկման նոր հայեցակարգ

(գծապատկեր 4):

«Հայաստանի Հանրապետության 2005 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված՝ ՀՀ օրենքներով գույքային հարկերի արտոնությունների փոխհատուցման գումարը՝ 85,211.6 հազ. դրամ, ներառելը հաշվարկված համահարթեցման դոտացիայում հակասում

է «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ դոտացիաների հաշվարկման կարգին և այդ գումարի չափով չի ապահովվել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով սահմանված համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարի նվազագույն չափը: Վերահսկիչ պալատի կողմից նախորդ տարի արձանագրված՝ օրենքներին անհամապատասխանությունը կրկնվել է 2005թ.:

Գծապատկեր 4



Համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարի՝ նախորդ տարվա համեմատ 3.1 մլրդ դրամ աճի պայմաններում, 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող 201 համայնքներից յուրաքանչյուրին տրամադրվել է 1,500.0 հազ. դրամ դոտացիա:

300-ից ավելի բնակիչ ունեցող 74 համայնքին հատկացված համահարթեցման դոտացիայի չափը չի գերազանցել 1,500.0 հազ. դրամը

Չի վերանայվել համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների հաշվարկման հայեցակարգը: Հանրապետության 930 համայնքների համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարի՝ նախորդ տարվա համեմատ 3.1 մլրդ դրամ աճի պայմաններում, 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող 201 համայնքներից յուրաքանչյուրին տրամադրվող

դոտացիայի չափը «Հայաստանի Հանրապետության 2005 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով մնացել է անփոփոխ՝ 1,500.0 հազ. դրամ, հակասություն առաջացնելով «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ համահարթեցում հասկացությանը՝ «Ֆինանսական համահարթեցումը համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերության նվազեցումն է»: Միաժամանակ, 300-ից ավելի բնակիչ ունեցող 74 համայնքին հատկացված համահարթեցման դոտացիայի չափը չի գերազանցել 1,500.0 հազ. դրամը, այդ թվում՝ 302 և 305 բնակիչ ունեցող Աթանի և Թորոսգյուղի դոտացիան կազմել է 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքին հատկացվող դոտացիայի 50%-ը:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ համայնքների ղեկավարներին պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով համայնքների բյուջեներին հատկացված միջոցների հաշվի մնացորդը առ 01.01.2006 թ. կազմել է անասնաբուժական ծառայության և քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գծով՝ 15,026.9 հազ. դրամ: Մասնավորապես, 23 համայնք չեն օգտագործել անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումների, կենդանիների հիվանդությունների կանխարգելման աշխատանքների կազմակերպման նպատակով համայնքների բյուջեներին հատկացված միջոցների 50-100%-ը: Արաքս, Գեղամասար, Նոյակերտ, Սառնակունք, Ջիլ համայնքների գանձապետական հաշիվները գտնվել են արգելանքի տակ, և այդ միջոցները փոխանցվել են դատական ակտերի հարկադիր կատարման ստորաբաժանումների գանձապետական հաշիվներին,

**Առաջարկություններ**

**ՀՀ Կառավարությանը՝**

- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի համապատասխան՝ մշակել պարտադիր լիազորությունների իրականացման կարգը սահմանող օրենք
- Հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ՝ «Գատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածում կատարել լրացում, սահմանելով՝ բռնագանձում չի կարող տարածվել պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով համայնքներին ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների վրա

առաջացնելով պատվիրակված լիազորությունների կատարման կրեդիտորական և ժամկետանց պարտքեր: Վերահսկիչ պալատի կարծիքով, մինչ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածով նախատեսված՝ պարտադիր լիազորությունների իրականացման կարգը սահմանող օրենքի ընդունումը, *պատվիրակված լիազորությունների իրականացմանն ուղղված միջոցների սպասարկման առանձին հատուկ գանձապետական հաշվի բացակայությունը թույլ չի տալիս դրանք տարանջատել համայնքի բյուջեի այլ միջոցներից և պաշտպանել պետական բյուջեից նպատակային*

հատկացումները տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենսդրությանը հակասող գործողությունների արդյունքում առաջացած հետևանքներից:

ՀՀ Կառավարության որոշումներով պահուստային ֆոնդից համայնքներին հատկացված սուբվենցիաների գանձապետական հաշվի մնացորդը՝ առ 01.01.2006 թ. կազմել է 482,360.0 հազ. դրամ կամ ֆինանսավորվածի 34,9%-ը: Համայնքների գանձապետական հաշիվների մնացորդի 94,8%-ը կամ

Սուբվենցիաների գծով հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից անհրաժեշտ է իրականացնել հսկողություն՝ հատկացված սուբվենցիաների և դրանց գանձապետական հաշվի մնացորդների օգտագործման նկատմամբ:

457,364.4 հազ. դրամը առաջացել է ՀՀ Կառավարության կողմից 2005 թ. չորրորդ եռամսյակում ընդունված որոշումներով ֆինանսավորված (613,610.4 հազ. դրամ) կապիտալ բնույթի և տնտեսության վերականգնման նպատակով հատկացված սուբվենցիաներից:

2005 թվականին ՀՀ Կառավարության որոշումներով պահուստային ֆոնդի հաշվին տրված սուբվենցիաների փաստացի ֆինանսավորումը կազմել է 1,383,051.5 հազ. դրամ, կամ հատկացվածից 3,004.6 հազ. դրամով պակաս, որից 3,000.0 հազ. դրամը՝ Կոտայքի մարզպետարանի կողմից այդ գումարի չափով ֆինանսավորման հայտը պետական լիազորված մարմին չներկայացնելու հետևանքով ՀՀ Կառավարության 08.09.2005 թ. N 1431-Ա որոշմամբ Նոր Երզնկա համայնքի բյուջեին հատկացված 4,000.0 հազ. դրամ սուբվենցիայի թերֆինանսավորումն է: Փաստորեն, մարզպետարանի կողմից ծրագրի ֆինանսավորումը 25%-ով կատարելու պատճառով չի իրականացվել հորդառատ անձրևներից և ուժեղ քամիներից տուժած համայնքին աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ ՀՀ Կառավարության որոշումը:

Համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Պետական բյուջեի ծախսերում կարող են նաև նախատեսվել համայնքների բյուջեներին հատկացվող՝

ա) այլ դոտացիաներ՝ համայնքի բյուջեի ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանն աջակցելու նպատակով որևէ ծախսատեսակի (ծրագրի) իրականացման հետ չկապակցված, անհատույց և անվերադարձ տրվող դրամական միջոցներ.

բ) սուբվենցիաներ՝ համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման համար անհատույց և անվերադարձ տրվող դրամական միջոցներ: Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրավասու է հետ պահանջել համայնքից պետական բյուջեից համայնքին հատկացված սուբվենցիաների ոչ նպատակային ծախսված գումարները: Սուբվենցիաների

**Առաջարկություններ**  
**ՀՀ Կառավարությանը՝**  
«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ սահմանել համայնքների բյուջեներին սուբվենցիաների տրամադրման կարգը

տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով»: Վերահսկիչ պալատի կարծիքով, ՀՀ Կառավարության 09.11.2005 թ. N 1854-Ա և 28.07.2005 թ. N 1064-Ա որոշումներով Արագածոտնի մարզի Աշտարակ ու Արմավիրի մարզի Հովտամեջ և Նորակերտ համայնքների բյուջեներում գոյացած պարտքերը մարելու նպատակով բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ «Պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ» հոդվածով հատկացված համապատասխանաբար՝ 20,000.0, 6,667.0 և 1,491.9 հազ.




դրամը, որպես որևէ ծախսատեսակի (ծրագրի) իրականացման հետ չկապակցված դրամական միջոց, պետք է հատկացվեր՝ «Այլ ներքին տրանսֆերտներ՝ դոտացիա» հոդվածով:

Համայնքներին սուբվենցիաների տրամադրումը՝ ՀՀ Կառավարության որոշումների և մեթոդական ցուցումների առանձին դրույթներով կանոնակարգելու փորձը հանգեցրել է թերությունների, որոնք հետագայում բացառելու նպատակով անհրաժեշտ է մշակել «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով նախատեսված կարգը:

**2.5.2 Համայնքների բյուջետային միջոցների օգտագործման վերահսկողության մասին**


2004 թվականին Երևանի Էրեբունի, Արաբկիր, Մալաթիա-Սեբաստիա թաղային համայնքների բյուջեների փաստացի ծախսերը կազմել են համապատասխանաբար՝ 808,521.0, 1,078,551.3, 1,012,904.0 հազ. դրամ, Արագածոտնի մարզի համայնքներինը՝ 823,023.0 հազ. դրամ (զժապատկեր 5):

Գ-ձապատկեր 5



Երևանի թաղային համայնքների բյուջեների ծախսերի կատարողականի նկատմամբ մարզերի համայնքներում այն ցածր է, որի հիմնական պատճառն է մարզերի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համայնքների բյուջեների սեփական եկամուտների թերահավաքումը, մասնավորապես, Արագածոտնի մարզի կտրվածքով՝ 351,194.8 հազ. դրամով կամ 47.2%-ով: Առանձին գյուղական համայնքների բյուջեների ծախսերի 85%-ից ավելին կազմել է պետական բյուջեից հատկացված համահարթեցման դոտացիան:

**Արագածոտնի մարզի համայնքների** բյուջեների փաստացի եկամուտներում պետական բյուջեից հատկացումները կազմել է 54,0% (զժապատկեր 6):



Արձանագրվել է, որ մարզի համայնքներին հատկացված սուբվենցիաների վճարումներն իրականացվել են ՀՀ Կառավարության՝ «ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող լրացուցիչ միջոցառումների մասին» 25.06.2004 թ. N 915-Ն որոշմամբ սահմանված պայմանների խախտումով, իսկ օգտագործումը՝ մարզպետարանի ոչ պատշաճ վերահսկողությամբ: Մասնավորապես, գազիֆիկացման նպատակով Ակունք համայնքի բյուջեին հատկացված սուբվենցիայի հաշվի մնացորդը՝ 45.0 հազ. դրամ, ենթակա է վերադարձման ՀՀ պետական բյուջե, իսկ Սանգյառ գյուղի՝ այդ աշխատանքների համար հատկացված ամբողջ գումարը գանձապետական ստորաբաժանման կողմից վճարվել է կապալառուին այն դեպքում, երբ աշխատանքների թերի կատարման պատճառով համայնքի ղեկավարը չի վավերացրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

Քուչակի գյուղապետարանի կնքած պայմանագրի առարկա է հանդիսացել համայնքային փողոցների վերանորոգման համար խճաքարի տեղափոխումը, սակայն 700.0 հազ. դրամի վճարումը կատարվել է ֆոնդային բյուջեից համայնքային ճանապարհների նորոգման համար կազմված ընդունման-հանձնման արձանագրության հիման վրա: Բացակայում է խճաքարի ձեռքբերումը և տեղափոխումը հիմնավորող փաստաթղթերը, իսկ աշխատանքները կատարվել են համայնքի բնակիչների ուժերով: Փաստորեն, համայնքի բյուջեից 700.0 հազ. դրամի ծախսը կատարվել է ոչ նպատակային:

Արագածոտնի մարզի մի շարք տեղական ինքնակառավարման մարմիններ խախտել են «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքի 8-րդ և «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջները, ամիսներով կուտակելով պարտքեր: Առանձին դեպքերում, համայնքի բյուջեից այդ հոդվածներով վճարումները չեն գերազանցել նախատեսվածի 50-60%-ը:

Բացի այդ, մարզի 38 տեղական ինքնակառավարման մարմինների ստանձնած և չկատարած պարտավորություններից առաջացած պարտքերը 2004 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 55,925.5 հազ. դրամ: Տարվա ընթացքում ՀՀ տնտեսական դատարանի վճիռների հիման վրա դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից բռնագանձվել է 29,663.5 հազ. դրամ: Մասնավորապես, Սասունիկ համայնքից, հօգուտ ՀՀ «Ոռոգում» ՓԲԸ, բնակչության նախորդ տարիների ջրի պարտքի դիմաց 2004 թվականի ընթացքում բռնագանձվել է բյուջեի փաստացի եկամուտների ամբողջ գումարը՝ 11,438.3

- Արագածոտնի մարզի 38 տեղական ինքնակառավարման մարմին ստանձնած պարտավորությունները չեն կատարել, կուտակելով պարտքեր,
- 2004 թ. դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը բռնագանձել է 30 մլն դրամ,
- բռնագանձված միջոցները կազմել են համայնքի բյուջեի մինչև 100%,
- տեղական ինքնակառավարման մարմինները խախտել են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջը

հազ. դրամ, այդ թվում՝ 7,841.9 հազ. դրամ՝ համահարթեցման դոտացիա: Փաստորեն, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից անտեսվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված բյուջետային ելքերի ամբողջական ծածկվածության սկզբունքը, և ձախողվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով սահմանված պարտադիր լիազորությունը՝ բյուջեի կատարման ապահովումը:

**Էրեբունի թաղապետարանի** 2004 թվական

փոխանցված վարչական բյուջեի պարտքը կազմել է

7,888.3 հազ. դրամ, որից տարվա ընթացքում ազատ մնացորդի առկայության պարագայում չի մարվել նախորդ բյուջետային տարում ֆինանսավորման ենթակա ստանձնած պարտավորություններից 948.8 հազ. դրամը, խախտելով «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 13-րդ և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածների պահանջը՝ «Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարն ուղղվում է՝

ա) նախորդ (եզրափակված) բյուջետային տարում վարչական մասից ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված ելքերի գծով՝ առկա պարտավորությունների կատարմանը»:

Արաբկիրի թաղապետարանը պատվիրակված լիազորությունների իրականացման համար հատկացված միջոցներից չօգտագործված 786.2 հազ. դրամ մնացորդը պետական բյուջե չի վերադարձրել

**Արաբկիրի թաղապետարանը** խախտել է ՀՀ

Կառավարության՝ «ՀՀ պետական բյուջեի կատարման ապահովող միջոցառումների մասին» 12.02.2004թ. N 216-Ն որոշումը, համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով որպես համայնքի բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ:

քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային ստորաբաժանմանը 2004 թ. հատկացված միջոցներից չօգտագործված 786.2 հազ. դրամ մնացորդը պետական բյուջե չի վերադարձրել, ձևակերպելով


Թաղապետարանի կողմից իրենց շահերը դատարանում ոչ պատշաճ ներկայացնելու պատճառով համայնքի բյուջեից 6,900.0 հազ. դրամը օգտագործվել է անարդյունավետ

Արաբկիրի թաղապետարանը իրավաբանական բաժնի առկայության պարագայում ՀՀ տնտեսական դատարանում թաղապետարանի շահերը պաշտպանելու նպատակով կնքել է պայմանագիր ֆիզիկական անձի հետ,

որին համայնքի բյուջեից վճարել է 6,900.0 հազ. դրամ, այդ թվում՝ հայցապահանջի նվազեցված գումարի 10%-ը՝ 3,900.0 հազ. դրամ, առանց հաշվի առնելու, որ հայցապահանջում (49,191.9 հազ. դրամ) ներառված 17,517.2 հազ. դրամը՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ստուգման արդյունքում հայցվորին հավելագրված գումարն է, որը չէր բողոքարկվել: Փաստորեն, թաղապետարանի կողմից իրենց շահերը դատարանում ոչ պատշաճ ներկայացնելու պատճառով բյուջետային միջոցներն օգտագործվել են անարդյունավետ:

**Մալաթիա-Սեբաստիա համայնքի** բյուջեի ծախսերի (1,012,904.0 հազ. դրամ) բաշխումն ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների ներկայացված է գծապատկեր 7-ում:

Գծապատկեր 7



«Ընթացիկ տրանսֆերտներ» հոդվածը ներառում է պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները և Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերը: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի, համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում, սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, իրականացնում է պետության պատվիրակված լիազորությունները, այդ թվում՝ կազմակերպում է համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Երևանի խորհրդի 02.02.2004 թ. հ 1/3 որոշումով Մալաթիա-Սեբաստիա և Էրեբունի

«Բյուջետային համակարգի մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության միջոցները՝

- համայնքի բյուջեի եկամուտ է,
- պլանավորումը, գանձումն ու վերահսկումն իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինը:

Սակայն, Երևանի խորհրդի որոշմամբ՝

- միջոցները հաշվարկվում, պլանավորվում և գանձվում են քաղաքապետարանի կողմից,
- քաղաքապետարաններին առաջարկվում է ձևակերպել մուտք և ելք:

Խախտվում է օրենքներով տեղական ինքնակառավարման մարմնին պետության կողմից պատվիրակված լիազորությունը

և Էրեբունի համայնքների հողի վարձավճարները օրենքներով չհիմնավորված ամրագրվել են Երևանի համաքաղաքային ծախսերի ֆինանսավորմանն ու ներառվել համայնքների բյուջեներում: Տարվա ընթացքում քաղաքապետարանի կողմից գանձված վարձավճարները, համապատասխանաբար՝ 49,470.6 և 34,747.1 հազ. դրամը, վերջինիս գրություններով քաղապետարաններին առաջարկվել է ձևակերպել որպես եկամուտ և ծախս, շրջանցելով ՀՀ վարչապետի 30.12.1997 թ. N 613՝ «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման ընթացքում

հաշվանցման կարգով փոխադարձ պարտքերի մարումը և բյուջետային երաշխիքներով տրվող երաշխավորագրերի տրամադրումը դադարեցնելու մասին» որոշումը: Հողի վարձավճարները կուտակվել

են քաղաքապետարանի գանձապետական հաշվին և ուղղվել համաքաղաքային նշանակության ծախսերին, սակայն արտացոլվել են համայնքների գանձապետական հաշիվներում: Դրանով իսկ խախտվել է ՀՀ Կառավարության 18.01.2002 թ. թիվ 48՝ «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» որոշումը:

Համայնքների բյուջեների ծախսերում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումներին ուղղված միջոցների տեսակարար կշիռը ներկայացված է գծապատկեր 5-ում: Համայնքների կարիքների համար ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք են բերվել բաց մրցույթով, մեկ աղբյուրից գնման և գնանշման հարցման ձևով, ինչպես նաև ուղղակի պայմանագրերով, համաձայնագրերով և հաշիվ-ապրանքագրերով:

2004 թվականի պետական բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները՝ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված ժամկետից ուշացելու պատճառով համայնքների ավագանիները՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջը, Էրեբունի և Մալաթիա-Մեքաստիա թաղապետարաններին թույլատրել են փողոցների սանիտարական մաքրման աշխատանքների և մսուր-մանկապարտեզների հացի գնումները նախքան մրցույթները կայանալը կատարել մեկ աղբյուրից, որի հետևանքով չի ապահովվել օրենքի նպատակը՝

Մարզի համայնքներում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքը՝

- գնումները կատարվել են ուղղակի պայմանագրերով կամ հաշիվ-ապրանքագրերով,
- հիմնավորված չէ գնման ձևի ընտրությունը,
- գնային առաջարկների հիմնավորվածության գնահատումը մրցութային հանձնաժողովների կողմից լիարժեք չէ,
- գնումների տեխնիկական բնութագրերում աշխատանքների ծավալները և նկարագրությունը հստակեցված չէ,
- գնումների տնտեսապես շահավետությունը չի ապահովվել:

տնտեսապես շահավետ պայմանով գնումների կատարումը: Նշված գնումները արհեստականորեն բաժանվել են առանձին չափաբաժինների, որը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի խախտում է: Արաբկիրի թաղապետարանը, բացի վերը նշվածից, խախտել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի պահանջը՝ մատակարարից 5,099.2 հազ. դրամի հացը ձեռք է բերել՝ կիրառելով գնանշման հարցման ձևը:

Արագածոտնի մարզի 114 համայնքների կողմից կատարված գնումների 49,2%-ը բաժին է ընկել Աշտարակ, Ապարան և Թալին քաղաքային համայնքներին: Մարզի համայնքների կարիքների համար առանձին գնումները կատարվել են՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14, 18, 22 և 23-րդ հոդվածների և գնումները կանոնակարգող ՀՀ Կառավարության 27.12.2001 թ. N 1267 որոշման պահանջները:

### 3. Առաջարկություններ օրենսդրական բարեփոխումների վերաբերյալ

Ելնելով կատարված աշխատանքներից, Վերահսկիչ պալատն առաջարկել է՝

1. Մշակել և ընդունել՝ «Հայաստանի Հանրապետության պետական պարտքի մասին» ՀՀ օրենքը:
2. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ՝ «տեղագրական և կադաստրալին քարտեզագրում» կետում կատարել փոփոխություններ ըստ ճյուղային նշանակության աշխատանքների:
3. Հաշվի առնելով ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների մասով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 32-րդ և 36-րդ հոդվածների պահանջների գործնական կիրառման դժվարությունները, անհրաժեշտ է նշված օրենքում կատարել փոփոխություններ:
4. Մշակել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ելքի և մուտքի մասին» ՀՀ օրենքի և «Օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծեր:
5. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի համապատասխան՝ մշակել պարտադիր լիազորությունների իրականացման կարգը սահմանող օրենք:
6. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածում կատարել լրացում, սահմանելով՝ բռնագանձում չի կարող տարածվել պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով համայնքներին ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների վրա:
7. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի և 28.1-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետի դրույթները միմյանց համապատասխանեցնելու նպատակով, կատարել օրենքում փոփոխություններ:
8. Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերության դրույթը, տարամեկնաբանությունից խուսափելու նպատակով, օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի «պետական բյուջե» բառերը փոխարինել «համապատասխան բյուջե» բառերով:
9. «Տեղական ինքնակառավարման մասին» և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքները միմյանց համապատասխանեցնելու նպատակով, համաձայն որի 29-րդ հոդվածի 3-րդ մասի՝ բազմաբնակարան շենքի կառավարման տարեկան բյուջեի եկամուտները գոյանում են նաև՝ «դ) պետության կամ համայնքի կողմից տրված սուբսիդիաներից ու դոտացիաներից»:
10. Անտառային հողերի մասով կատարել փոփոխություններ՝ «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 10-րդ հոդվածներում, ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ և ՀՀ անտառային օրենսգրքի 17-րդ, 16-րդ և 51-րդ հոդվածներում:

## 4. Միջազգային կապերը

1. ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատը INTOSAI, Գերագույն Վերահսկիչ Ատյանների Եվրոպական կազմակերպության (EUROSAI) և Անկախ Պետությունների Համագործակցության Ֆինանսական Վերահսկողության Գերագույն Մարմինների ղեկավարների խորհրդի անդամ է:

2. 2005 թ. Վերահսկիչ պալատի նախագահը մասնակցել է EUROSAI V վեհաժողովին, որն անցկացվել է Բոննոմ: Վեհաժողովն աշխատել է երեք ուղղություններով՝ «Գերագույն վերահսկիչ ատյանների դերը՝ կառավարության կողմից պատրաստվող բյուջետային առաջարկների ընթացքում և խորհրդարանում դրա քննարկման ժամանակ», «Պետական բյուջեի նկատմամբ ընթացիկ (պետական բյուջեի ընթացիկ կատարման ժամանակ) և հաջորդող (կառավարության կողմից պետական բյուջեի վերաբերյալ հաշվետվության ներկայացման) իրականացվող վերահսկողությունը», «Պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը»: Ընդունվել են համապատասխան առաջարկություններ:

3. 2005 թ. նոյեմբերին ՀՀ Ազգային ժողովի պատվիրակության՝ Ուկրաինայի Հանրապետություն այցի շրջանակներում, Ուկրաինայի Հանրապետության Հաշվիչ պալատի և ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի միջև ստորագրվել է Համագործակցության համաձայնագիր:

4. Շարունակվում է համագործակցությունը Ռուսաստանի Դաշնության Հաշվիչ պալատի հետ:

Համատեղ ուսումնասիրություն է իրականացվել Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանը տրամադրված պետական վարկի, Հայաստանի Հանրապետության՝ Ռուսաստանի Դաշնության հանդեպ պարտքի մարման, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետության տնտեսությունում կատարված ներդրումների վերաբերյալ: Վերահսկողության արդյունքներն ամփոփվել են նոյեմբեր ամսին Երևանում տեղի ունեցած Վերահսկիչ պալատի խորհրդի և Հաշվիչ պալատի կոլեգիայի համատեղ նիստում:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ Հաշվետվությունն ուղարկվել է ՀՀ Ազգային ժողով, ՀՀ Կառավարություն և Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Պետական Դումա, Դաշնային խորհրդ, ՌԴ Կառավարություն:

5. Վերահսկիչ պալատի պատվիրակությունը 2005 թ. սեպտեմբերին մասնակցել է Մոլդովայի մայրաքաղաք Քիշինևում հրավիրված՝ ԱՊՀ երկրների Ֆինանսական Վերահսկողության Գերագույն Մարմինների ղեկավարների խորհրդի VI վեհաժողովին, որտեղ ընդունվել է համատեղ Հռչակագիր:

6. 2005 թ. Վերահսկիչ պալատը շարունակել է համագործակցել «Հայաստան. Օրենսդրի հզորացում ծրագիր իրականացնող DA/DAI» և «Գերմանական տեխնիկական համագործակցության ընկերություն» (ԳՏՀԸ/GTZ) կառույցների հետ:

7. Շարունակվում է համագործակցությունը Գերմանիայի Դաշնության դաշնային Հաշվիչ պալատների հետ: Համատեղ միջոցառումներ են իրականացվում Վերահսկիչ պալատի և Բավարիայի, Հեսսենի Դաշնության Հաշվիչ պալատների աշխատակիցների միջև աշխատանքային փորձի փոխանակման ուղղությամբ:

8. Արդեն երկրորդ տարին է, որ մեր Վերահսկիչ պալատի աշխատակիցները մասնակցում են Ճապոնիայի Հաշվիչ պալատի կողմից կազմակերպված և ֆինանսավորվող գիտաժողովին:

9. Կադրերի վերապատրաստման ուղղությամբ միջազգային փորձին առավել հանգամանորեն ծանոթանալու նպատակով վերահսկիչ պալատը համագործակցում է INTOSAI IDI (զարգացման նախաձեռնություն) կազմակերպության հետ՝ մասնակցելով կազմակերպվող սեմինարներին և դասընթացներին: Վերահսկիչ պալատի մասնագետները ստացել են համապատասխան միջազգային որակավորում, այդ թվում՝ դասավանդելու իրավունք:



## 5. Վերահսկիչ պալատի գործունեության ապահովումը

### 5.1. Վերահսկիչ պալատի մեթոդաբանական ապահովումը

Վերահսկիչ պալատի հետագա զարգացման ռազմավարության շրջանակներում Վերահսկիչ պալատի կողմից մշակվել են «ՀՀ ԱԺ Վերահսկիչ պալատի գործունեության մեթոդաբանական ապահովման կազմակերպման» և «ՀՀ ԱԺ Վերահսկիչ պալատի տարեկան հաշվետվությունը կազմելու» կարգը: Շարունակվում է Համաշխարհային բանկի «ՀՀ պետական հատվածի արդիականացման» ծրագրի շրջանակներում Արտաքին պետական վերահսկողության ստանդարտների, Արտաքին պետական ֆինանսական և արդյունավետության վերահսկողության ձեռնարկների մշակման գործընթացը:

Վերահսկիչ պալատի վերահսկողության ստանդարտացման գործում 2005թ. ընթացքում Վերահսկիչ պալատի և ԱՄՆ պետական գանձապետարանի համագործակցության արդյունքում կմշակվեն մի շարք մեթոդաբանական փաստաթղթեր նույնպես:

### 5.2. Վերահսկիչ պալատի տեղեկատվական ապահովումը

Վերահսկիչ պալատի տեղեկատվական ապահովումն ուղղված է աշխատանքների արդյունավետ իրականացմանը: Վերահսկիչ պալատում գործում է ներքին համակարգչային ցանց և ապահովված է Internet կապով:

Վերահսկիչ պալատի հրապարակայնության սկզբունքից ելնելով, գործում է Վերահսկիչ պալատի Web-կայքը՝ <http://www.parliament.am/controlchamber/index.htm>, որը հնարավորություն է տալիս ծանոթանալ Վերահսկիչ պալատի վերահսկողական գործունեությանը, կառուցվածքին, արտաքին կապերին և ընթացիկ իրադարձություններին:

Վերահսկիչ պալատի վերահսկողության արդյունքները պարբերաբար լուսաբանվել են զանգվածային տարբեր լրատվամիջոցներով: Վերահսկիչ պալատի նախագահն ու խորհրդի անդամները մամուլ ասուլիսներում, հեռուստահաղորդումներում, թերթերին տրված հարցազրույցներում, տպագրված հոդվածներում ներկայացրել են Վերահսկիչ պալատի աշխատանքը՝ ապահովելով գործունեության հրապարակայնությունը:

### 5.3. Վերահսկիչ պալատի կադրային ապահովումը

*Բարձրագույն վերահսկիչ մարմնի անդամները և աշխատակիցները պետք է ունենան անհրաժեշտ որակավորում և ազնվություն՝ իրենց վրա դրված պարտականությունները հաջողությամբ կատարելու համար*

**Լիմայի Հռչակագիր, հոդված 14**

Կադրերի ճիշտ ընտրությունը, ուսուցումը, տեսական ու գործնական հատկանիշների զարգացումը եղել ու մնում է աշխատանքի արդյունավետության կարևոր չափորոշիչ:

2005 թվականին զգալի աշխատանք է կատարվել Վերահսկիչ պալատի աշխատակիցների մասնագիտական որակավորումը բարձրացնելու ուղղությամբ:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության «Ուսուցման կենտրոն» վերապատրաստման դասընթացներին մասնակցել են 25, հաշվապահական դասընթացներին՝ 7 աշխատակից, ստանալով համապատասխան հավաստագրեր:

Արտերկրում կազմակերպված դասընթացներին մասնակցել են 6 մասնագետ, ուսուցանել՝ 5-ը, ստանալով բարձրակարգ հավստագրեր և դասախոսական աշխատանքի իրավունք:

2006 թվականի հունվարի 1-ի դրությամբ Վերահսկիչ պալատի 70 մասնագետ աշխատակիցներից 50-ը վերահսկիչներ են՝ բարձրագույն կրթությամբ: Մասնագետներից 6-ը տնտեսագիտության, իսկ 2-ը՝ տեխնիկական գիտությունների թեկնածուներ են:

Վերահսկիչ պալատի աշխատակիցների գերակշիռ մասը աշխատել է ՀՀ և արտերկրի պետական տարբեր մարմիններում և ունի վերահսկողական գործառույթների իրականացման, ինչպես նաև՝ վարչական աշխատանքի հարուստ փորձ:

#### 5.4. Վերահսկիչ պալատի ֆինանսական ապահովումը

*Բարձրագույն վերահսկիչ մարմինը պետք է ապահովված լինի ֆինանսական միջոցներով, որոնք անհրաժեշտ են իրականացնելու իրեն վերապահված խնդիրները*

##### **Լիմայի Հռչակագիր, հոդված 7**

«Հայաստանի Հանրապետության 2005 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով Վերահսկիչ պալատի համար սահմանվել էր 121,904.7 հազ. դրամի ծախսային ծրագիր՝ ընթացիկ ծախսերի գծով: Տարվա ընթացքում, անհրաժեշտությունից ելնելով, հոդվածային տեղաշարժեր է կատարվել և, համաձայն ճշգրտված նախահաշվի, ընթացիկ ծախսը ծրագրավորվել է 120,462.7, իսկ կապիտալ ծախսը՝ 1,442.0 հազ. դրամ: Փաստացի ծախսը կազմել է 121,860.8 հազ. դրամ, որից՝ ընթացիկ ծախսերի գծով՝ 120,425.2 հազ. դրամ և կապիտալ ծախսերի գծով՝ 1,435.6 հազ. դրամ: